2023, ՆՈՅԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 21 (641)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

Հայրապետական մաղթանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Նոյեմբերի 5-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, պատարագի սրբազան արարողությանը մասնակցեց Սուրբ Գայանե վանքում: Պատարագիչն էր Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպս. Նալբանդյանը:

Պատարագիչ սրբազանը, իր քարոզում շնորհավորելով Հայոց Հովվապետին օծման և գահակալության տարեդարձի կապակցությամբ, ի մասնավորի նշեց. «Ձերդ Սրբության գահակալության տարիների ընթացքում մեր Եկեղեցին ապրեց նոր վերելքներ հոգևոր-կրթական, եկեղեցաշինության և հոգևոր-հովվական ասպարեզներում: Ձեր շնորհիվ վեր խոյացան բազմաթիվ եկեղեցիներ, որոնց զանգերի ղողանջները դարձան անլռելի հրավերներ մեր ժողովրդի հոգևոր զարթոնքին: Հայրապետական անդադրում զգաստացուցիչ պատգամներով հեռատեսորեն մխիթարեցիք տառապյալ հայ ժողովուրդի զավակներին՝ առաջնորդելով նրանց հայրենասիրության ու հայրենատիրության և ուղեկցելով դժվարին ու տագնապալի փոթորկալից ուղիներում:

...Վեհափառ Տեր, կիրակնօրյա ավետարանական խորհրդով և հոգևոր ցնծությամբ շնորհավորում ենք Ձերդ Սրբության օծման օրհանբեր տոնը՝ աղոթք բարձրացնելով առ ամենակալն Աստված, որ Տերը ծաղկուն պահի հայրապետական Ձեր գավազանը՝ հովվելու և առաջնորդելու հավատավոր Ձեր հոտին բազում տարիներ»:

Սուրբ պատարագի ավարտին Ամենայն Հայոց Հայրապետի օծման և գահակալության 24-րդ տարեդարձի առիթով կատարվեց Հայրապետական մաղթանք: Սրբազան արարողությունը հանդիսապետեց Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Վատիկանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Խաժակ արք. Պարսամյանը:

Ներկա հոգևորականաց դասն ու հավատավոր ժողովուրդն աղոթք բարձրացրին առ Աստված Ամենայն Հայոց Հայրապետության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության ու պայծառության, ինչպես նաև Նորին Սրբության քաջառողջության, կենաց արևշատության և բազմամյա անսասան գահակալության համար:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ավարտվեց Գերագույն հոգևոր խորհրդի ժողովը

Հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 3-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ժողովը:

Ժողովն ատենապետեցին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանը և Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Վատիկանում Հայ Եկեղեցու ներկայացուցիչ Տ. Խաժակ արք. Պարսամյանը:

Հայրենական կյանքում ստեղծված կացության, աշխարհաքաղաքական առկա իրավիճակի և այդ համատեքստում Հայաստանի Հանրապետության անվտանգային հիմնախնդիրների, բռնի տեղահանված արցախահայության իրավունքների պաշտպանության, նրանց կեցության ապահովման և հումանիտար աջակցության ծրագրերի, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ իրականացվող աշխատանքների վերաբերյալ զեկույցներով հանդես եկան Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանը, ԳՀԽ անդամ, ի. գ. դ. Գևորգ Դանիելյանը, ԱՀ նախկին պետնախարար Արտակ Բեգլարյանը, Մայր Աթոռի սոցիալական ծառայության վարչական խորհրդի ատենապետ Տ. Գևորգ եպս. Սարոյանը և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության հարցերով գրասենյակի տնօրեն Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը:

Անդրադառնալով Ադրբեջանի ցեղասպանական գործողությունների հետևանքով Արցախի ամբողջական հայաթափմանը՝ ԳՀԽ-ն ընդգծեց բռնի տեղահանված արցախահայության արդար իրավունքների պաշտպանության կենսական անհրաժեշտությունը: Խիստ կարևորվեցին արցախցիներին ուղղված հոգևոր խնամատարական, հումանիտար և հոգեբանական աջակցության ծրագրերի շարունակական իրագործումը, կեցության պայմանների բարելավման և զբաղվածության ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացումը:

Մտահոգությամբ անդրադարձ կատարվեց Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության նկատմամբ Ադրբեջանի ժխտողական քաղաքականությանը: Անհրաժեշտ համարվեց, որ միջազգային, միջեկեղեցական ու միջկրոնական, այլև բոլոր հնարավոր այլ հարթակներում հետևողականորեն ներկայացվեն հայկական հուշարձանների, սրբավայրերի ու գերեզմանատների նկատմամբ արձանագրված ոտնձգությունները, և աշխատանքներ իրականացվեն հայկական ժառանգության անխաթար պահպանության ուղղությամբ:

Ժողովում որոշվեց նաև, որ Արցախի թեմն ստեղծված կացության պայմաններում շարունակելու է պահպանել իր կարգավիճակը և գործել համաձայն եկեղեցական-կանոնական սկզբունքների:

Հանրակրթության ոլորտում հայագիտական առարկաների ծրագրերի բովանդակային ընդգրկվածության և կիրակնօրյա դպրոցների ուսումնական ծրագրերի վերաբերյալ զեկույցներով հանդես եկավ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը:

Հայր սուրբը ժողովականներին տեղեկություններ փոխանցեց 2023–24 թթ. նոր չափորոշիչների հիման վրա հրատարակված հայագիտական առարկաների ծրագրերի վերաբերյալ: Մասնավոր անդրադարձ կատարվեց Հայոց պատմության 7-րդ դասարանի դասագրքին, որում առկա են ինչպես պատմական, այնպես էլ եկեղեցագիտական սխալներ ու բացթողումներ: Խիստ անընդունելի համարվեց, որ դասագրքերի պատրաստման գործընթացում դրանց բովանդակության մեջ տեղ են գտել գիտական համընդհանուր ճանաչում ստացած, ինչպես և Եկեղեցու կողմից նվիրագործված սկզբունքներին ու դիրքորոշումներին հակասող անհատական տեսակետներ ու վարկածներ:

Քննարկումներից հետո հանձնարարականներ տրվեցին պատկան կառույցների հետ անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել հանրակրթության ծրագրերից բացառելու բովանդակային նման շեղումներն ու աղճատումները:

Կիրակնօրյա դպրոցների ուսումնական ծրագրի առնչությամբ ԳՀԽ-ն որոշեց թեմական առաջնորդների և համապատասխան մասնագետների ընդլայնված քննարկումներ կազմակերպել՝ կարևորելով սերունդների հոգևոր դաստիարակության ու կրթության առաքելությունը:

Հայաստանում ամուսնությունների և ծնելիության նվազման, ամուսնալուծությունների աճի, թմրամոլության տարածվածության, կրոնական կազմակերպությունների մարդորսական գործունեության մասին զեկույցներով հանդես եկան Մայր Աթոռի իրավախորհրդատվական հանձնախմբի անդամ Արա Զոհրաբյանը, Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի տնօրեն Սուրեն Նազինյանը և Գևորգյան հոգևոր ճեմարանի՝ աղանդագիտության դասախոս Տ. Ղևոնդ ավ. քհն. Մայիլյանը:

Արձանագրվեց, որ երկրի ապագայի և ազգային անվտանգության համատեքստում խիստ սպառնալից են հիշյալ ոլորտներում տիրող իրավիճակները և ահագնացող միտումները: Առկա հանգամանքները նկատի առնելով՝ կարևորվեց հովվական խնամքի և հոգևոր քարոզչության շրջանակներում հատուկ աշխատանքների իրականացումը՝ ի զորացում ընտանեկան, ազգային և բարոյական արժեհամակարգի:

Քառօրյա ժողովի ընթացքում քննարկվեցին նաև Եկեղեցու առաքելության արդյունավորմանն առնչվող այլ հարցեր:

Ընդունելություն Մայր Աթոռի Վեհարանում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը նոյեմբերի 13-ին ընդունեց Արգենտինայում հրեական կազմակերպությունների պատվիրակության նախագահ Խորխե Կնոբլովիցին և դիվանագիտական հարաբերությունների պատասխանատու Արիել Բլուֆշտեյնին:

Հանդիպմանը Նորին Սրբությունը, անդրադառնալով երկու ժողովուրդների ընդհանրություններին, ընդգծեց, որ պատմության ընթացքում հայ և հրեա ժողովուրդները կրել են բազմաթիվ տառապանքներ և ենթարկվել ցեղասպանության, սակայն իրենց հավատքի շնորհիվ կարողացել են դիմագրավել բոլոր տեսակի փորձությունները:

Խոսելով Հայաստանի առջև ծառացած մարտահրավերների, բռնի տեղահանված արցախահայերի խնդիրների և Ադրբեջանի կողմից շարունակվող ռազմատենչ քաղաքականության մասին՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ ստեղծված իրադրությունը ցավալի հետևանքն է Ադրբեջանի ցեղասպանական գործողություններին միջազգային կառույցների անհամարժեք արձագանքի:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ Հոլոքոստին, ինչպես նաև միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման կարևորությանը՝ շեշտելով, որ այդ ճանապարհով է հնարավոր կանխարգելել նմանօրինակ ոճիրների կրկնությունը մարդկային կյանքում:

Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց տարածաշրջանում և Մերձավոր Արևելքում առկա հակամարտություններին՝ դրանց հանգուցալուծման ու խաղաղության հաստատման գործում կարևոր նկատելով նաև միջկրոնական երկխոսությունը:

Պրն. Խորխե Կնոբլովիցն աշխարհում տիրող բարդ իրավիճակի հաղթահարման և արդարության հաստատման գործում ևս կարևորեց մարդկության մեջ հավատքի զորացումը և կրոնների խաղաղ համագոյակցության երկխոսությունը: Պատվիրակության նախագահը Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ ինչպես Արգենտինան, այնպես էլ Արգենտինայի հրեական կազմակերպությունները ճանաչել են Հայոց ցեղասպանությունը և դատապարտել այն՝ պահպանելով պատմական հիշողությունը՝ հետագայում կանխելու համար նմանօրինակ ոճրագործությունները:

Զրույցի ընթացքում պրն. Կնոբլովիցը նաև իր սերն ու հարգանքն արտահայտեց հայ ժողովրդի, նրա պատմական անցյալի ու հարուստ մշակույթի հանդեպ:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Արգենտինայում հայ և հրեա համայնքների համագործակցությանը:

Բուխարեստում տեղի ունեցավ քննարկում՝ նվիրված Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանությանը և արցախահայերի սոցիալական կացությանը

Նոյեմբերի 14-ին Ռումինիայի Հանրապետության կրոնից նախարարության և Ռումինիայի հայոց թեմի նախաձեռնությամբ Բուխարեստում տեղի ունեցավ ժողով-քննարկում՝ նվիրված Արցախի պատմամշակութային և հոգևոր ժառանգության պահպանությանը, արցախահայերի առջև ծառացած հումանիտար ծանր իրավիճակի վերացմանը միտված՝ Ռումինիայի կառավարության և եկեղեցական համայնքների ներգրավմանը:

Հանդիպումը նախագահում էր Ռումինիայի կրոնից նախարար տիար Չիպրիան Օլինիչը, մասնակցում էին Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթև եպս. Հակոբյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանը, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման հարցերով գրասենյակի և Մայր Աթոռի քարոզչական կենտրոնի տնօրեն Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը, Ռումին Ուղղափառ Եկեղեցու պատրիարքական փոխանորդ Տ. Վարլաամ եպս. Պլոյեշտիանուն, Ռոմանո-Կաթոլիկ Եկեղեցու արքեպիսկոպոս և Բուխարեստի մետրոպոլիտ Աուրել Պերկան, Գրեկո-Կաթոլիկ Եկեղեցու եպս. Միխայ Ֆրացիլը, Հունգար Լութերական Եկեղեցու ներկայացուցիչ Մարտոն քհն. Իլիեշը, Հունգար Բողոքական Եկեղեցու եպիսկոպոս Կատո Բելայի ներկայացուցիչը, Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչ Նասկի քահանա Էվերետը, Ռումինիայի հայոց թեմի թեմական խորհրդի անդամներ, հոգևորականներ:

Բացման խոսքով հանդես եկավ Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթև եպս. Հակոբյանը: Իր խոսքում սրբազան հայրը, ի դեմս Ռումինիայի կրոնից նախարարության, շնորհակալություն հայտնեց ռումին կառավարությանը՝ հանդիպման կազմակերպման համար: Այնուհետև Տաթև սրբազանը մասնակիցներին ներկայացրեց հայրենազրկված արցախահայերի ծանր կացությունը և առկա մարտահրավերները՝ ընդգծելով վերջիններիս օժանդակելու անհրաժեշտությունը:

Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանն անդրադարձավ Արցախի հոգևոր և պատմամշակութային հարուստ ժառանգությանը՝ ներկայացնելով Ադրբեջանի կողմից իրականացվող մշակութային ցեղասպանության փաստագրված ապացույցներ:

Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանը ներկայացրեց ադրբեջանական ագրեսիայի հետևանքով բռնի տեղահանված 100 000-ից ավելի արցախահայության սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական վիճակը և այս ուղղությամբ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից իրականացվող ծրագրերը:

Ռումին Ուղղափառ Եկեղեցու պատրիարքական փոխանորդ Տ. Վարլաամ եպս. Պլոյեշտիանուն ներկաներին փոխանցեց Դանիել պատրիարքի ողջույնի խոսքը, որից հետո ելույթներով հանդես եկան մասնակից բոլոր Եկեղեցիների ներկայացուցիչները՝ իրենց աջակցությունը բերելով արցախահայության և պատրաստակամություն հայտնելով նպաստելու սոցիալական նախաձեռնություններին:

Ռումինիայի կրոնից նախարարությունը, Ռումինիայի հայոց թեմի հետ համագործակցաբար, անգլերենից ռումիներեն էր թարգմանել և հրատարակել Արցախի հոգևոր, պատմամշակութային ժառանգության և Արցախի մասին տեղեկատվական գրքույկ, որը բաժանվեց բոլոր մասնակիցներին:

Գերագույն հոգևոր խորհրդի անդամներն այցելեցին հայրենազրկված արցախահայերին

Նոյեմբերի 2-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագույն հոգևոր խորհրդի անդամների ուղեկցությամբ այցելեց Կոտայքի թեմի Ծաղկածորի թեմապատկան ճամբար, որտեղ ապաստան է գտել Արցախից բռնի տեղահանված 38 ընտանիք:

Հայոց Հայրապետը, իր օրհնությունն ու հայրական սերը փոխանցելով արցախցիներին, ընդգծեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իր աշխարհասփյուռ թեմերով այս օրերին լծված է Արցախից բռնի տեղահանված մեր զավակների հոգևոր, հումանիտար և սոցիալական կարիքների հոգածության աշխատանքներին: Տեղահանված արցախցիներին թեմապատկան կառույցներում կացարաններով ապահովմանը և սոցիալական աջակցության ծրագրերին զուգահեռ իրականացվում է նաև հոգեխնամ առաքելություն:

Հայոց Հայրապետն արցախահայերին պատգամեց զինվել հավատքով, հույսով և ապագայի նկատմամբ լավատեսության ոգով: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ Աստծու օգնականությամբ և միասնական ջանքերով Արցախի մեր զավակները կկարողանան հաղթահարել իրենց առջև ծառացած փորձություններն ու մարտահրավերները: Հայոց Հովվապետը և ԳՀԽ անդամները նաև հետաքրքրվեցին արցախցիների կեցության պայմաններով, նրանց կարիքներով՝ ընդգծելով, որ աջակցության ծրագրերը կլինեն շարունակական:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բաշխեց Երևանի №1 տուն-ինտերնատի բնակիչներին

Նոյեմբերի 11-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Հրեշտակապետների և երկնային զորքերի տոնը: Այս առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցում մատուցվեց սուրբ և անմահ պատարագ: Պատարագիչն էր Տ. Դավիթ քհն. Գիշյանը:

Պատարագի սրբազան արարողությանն ուխտավորաբար իրենց մասնակցությունն էին բերել Երևանի №1 տուն-ինտերնատի բնակիչները և Արաբկիրի Սուրբ Խաչ եկեղեցու երիտասարդաց միության անդամները՝ ուղեկցությամբ Տ. Արարատ քհն. Օրդոյանի և Տ. Տիգրան քհն. Բադիրյանի: Պատարագից հետո Գևորգյան հոգևոր ճեմարանի ուսումնական մասնաշենքում ինտերնատի տարեցներին ընդունեց և իր հայրական օրհնությունը բաշխեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց տուն-ինտերնատի տնօրենությանը և բոլոր այն անձանց, որոնց հոգածությամբ իրենց արժանապատիվ խնամքն են ստանում հաստատության բնակիչները: Իր բարեմաղթանքները փոխանցելով տարեցներին՝ Վեհափառ Հայրապետը հորդորեց գնահատել իրենց խնամքն իրականացնող հոգատար անձանց, ապրել աստվածային սիրով, հույսով, հավատքով և առ Աստված աղոթքներով: Նորին Սրբությունն իր մասնավոր գնահատանքը բերեց նաև քահանա հայրերին՝ հաստատության բնակիչների հոգևոր կարիքների հոգածության, և Արաբկիրի Սուրբ Խաչ եկեղեցու երիտասարդաց միության անդամներին՝ տուն-ինտերնատ մշտական այցելությունների համար:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Տ. Հովել քհն. Օհանյանը, ազատվելով ԱՄՆ հայոց արևմտյան թեմում ստանձնած պարտականություններից, սույն թվականի նոյեմբերի 8-ից ծառայության է նշանակվել Արագածոտնի թեմում:

Տ. Հայկ քհն. Քոչարյանը, ազատվելով Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարչի օգնականի պաշտոնից, սույն թվականի նոյեմբերի 8-ից ծառայության է կոչվել Արագածոտնի թեմում:

Կարգալույծ են հռչակվել Տ. Վրթանես քհն. Բաղումյանը, Տ. Մեսրոպ քհն. Հունանյանը և Տ. Հովհան քհն. Հովհաննիսյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Կոտայքի թեմի Գառնիի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Վրթանես քհն. Բաղումյանը: Տնօրենության համար հիմք են ծառայել Տեր Վրթանես քահանայի ծառայության վայրն ինքնակամ լքելը և առանց արտոնության ԱՄՆ մեկնելը:

Կարգալույծ եկեղեցականը դասվում է աշխարհականների շարքին՝ Վարդան Բաղումյան ավազանի անունով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Արմավիրի թեմի հոգևոր սպասավոր Տ. Մեսրոպ քհն. Հունանյանը: Տնօրենության համար հիմք է ծառայել Մեսրոպ քահանայի՝ եկեղեցականին անհարիր վարքագիծը:

Հիմք ընդունելով հոգևոր ծառայությունից հրաժարվելու խնդրագիրը՝ հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել նաև Շիրակի թեմի հոգևոր սպասավոր Տ. Հովհան քհն. Հովհաննիսյանը:

Կարգալույծ եկեղեցականներն այսուհետ կդասվեն աշխարհականների շարքին՝ Բորիս Հունանյան և Բենիկ Հովհաննիսյան ավազանի անուններով:

ԴԱՍԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Վանքը մնաց մեր մեջ, մենք մնացինք վանքում»

Զրույց Դերենիկ աբեղա Սահակյանի հետ

«2023, հուլիսի 24:
Ցավն ու տխրությունը ծանրացել են հոգուս:
Այս անորոշ իրականության մեջ ցավն այն չէ,
որ շրջափակման մեջ ենք, որ հայրենիք կարող ենք
կորցնել և դառնալ հայոց պատմության ևս մեկ ամոթալի
էջ բացող, այլ խոր ցավն այն է, որ հայս դեռ չի գիտակցում
ահագնացող վտանգը, ու անտարբերություն կա: Նոր եմ
հասկանում՝ ինչ ենք մենք կորցրել, որովհետև ունեցածի
նկատմամբ անտարբեր ենք եղել»:

Հայր Դերենիկի օրագրային էջերից

— Հայր Սուրբ, կորստի վշտից համրանում են խոսքերը, հայացքները՝ անէանում, և ժամանակ է պետք՝ հոգեբանական քարացումը ինքնահաղթահարելու, աստիճանաբար վերակենդանանալու: Այդ ամբողջ ընթացքում, սակայն, մարդու մեջ առկա է գիտակցական անընդհատ հոսք: Ինքներդ ինչպե՞ս եք հաղթահարում Արցախի և մասնավորապես Դադիվանքի կորուստը:

— Ընդհանրապես, այս կյանքում ցավը հաղթահարելու երկու տարբերակ գոյություն ունի: Առաջինն այն է, որ պարզապես այդ ցավն ընդունում ես որպես անցյալ, որ տեղի է ունեցել և վերջացել է, և քայլում ես առաջ՝ անցյալում թողնելով այն, ինչ որ քեզ համար թանկ էր և այլևս ցավ է պատճառում, այսինքն՝ մոռացության սկզբունքով ես հաղթահարում խնդիրը: Հաղթահարելու երկրորդ տարբերակը՝ ընդունել ճշմարտությունն այնպիսին, ինչպիսին որ է, բայց միևնույն ժամանակ հանուն այդ ճշմարտության պայքարել, որովհետև ցավը նաև պայքարի միջոցով է հաղթահարվում: Եթե բժշկական տեսանկյունից դիտարկենք, երբ որ հիվանդը գնում է բժշկի մոտ՝ ցավը հաղթահարելու բուժման միջոցով, բուժումը դյուրին չի լինում, ցավոտ է լինում, բայց ցավ զգալու արդյունքում է մարդ բժշկվում: Այդպես էլ՝ այս դեպքում: Կորստյան ցավը քեզ մղում է ոչ թե մոռանալու կամ անցյալում թողնելու, այլ, ընդհակառակը, այդ բժշկող ցավի սկզբունքով առաջնորդվելու, Աստծուն ապավինելու և անցնելու ճանապարհը, որով պիտի բժշկվես: Իսկ բժշկությունն այս պարագայում կլինի վերադարձով, որովհետև առանց վերադարձի, առանց կարոտի հագեցումի, առանց այն ճշմարտության, հանուն որի ապրում ես, դու դեռ լիարժեք չես: Ցավի հաղթահարումը կայանում է, երբ դու այլևս ունենում ես այն, ինչ որ ունեիր, և քեզ երջանկացնում էր:

— Դուք մինչև վերջ մնացիք Արցախի ժողովրդի հետ, որպես վայել է հոգևոր հովվին, ժողովրդի հետ անմիջականորեն կրելով տևական պաշարման բոլոր զրկանքները, հետպատերազմյան հոգեբանական ծանր հետևանքները, շարունակվող տեղեկատվական և ռազմական ահաբեկչական պատերազմների ամենօրյա սպառնալիքները: Ինչպե՞ս էիք միաժամանակ դիմակայում այդ ամենին:

— Դժվարությունները հաղթահարելու երկու կարևոր նախապայման կա առհասարակ. նախ՝ գիտակցել, թե ինչու ես անում, և երկրորդ՝ ինչ որ անում ես, սիրո՞ւմ ես, թե՞ ոչ: Առաջին պայմանը՝ գիտակցությունը, շատ խորն էր, պարզ էր, արևի պես ճշմարիտ էր. սա քո հայոց հողն է, քո սրբությունն է, և դու պարտավոր ես՝ որպես հայ և հոգևորական, պահել այն, ծառայել, որքան հնարավոր է: Երկրորդ՝ սերը. սերը հայրենիքի նկատմամբ, սերը եկեղեցու նկատմամբ քեզ մղիչ ուժ են տալիս: Աստվածային սիրո ներգործությունը մեր կյանքից ներս մեզ ավելի հզոր է դարձնում:

Մյուս կողմից էլ՝ վանքի զորությունը, հողի զորությունը մեզ տալիս էին այն, ինչ պետք է յուրաքանչյուր հայի, որ իրեն զգա տեր ու պաշտպան այդ ամենին, և ինձ շրջապատող թշնամական ներկայությունը հենց այս պատճառով երբևէ ինձ չի ճնշել: Մեր հայոց վանքը աղոթական ու հայկական պահելու համար յուրաքանչյուրի մեծագույն շնորհը կլիներ այդ ծառայությունը:

Մի կարևոր հանգամանք ևս կուզենայի շեշտադրել Դադիվանքի օրերի հետ կապված: Ամբողջ ընթացքում մենք զգացել ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Գարեգին Երկրորդի հայրական հոգածությունը և ուշադրությունը: Երբ սեպտեմբերի 19-ին սկսվեց պատերազմը, ժամը տասներեքն էր, պայթյունները շատ ուժեղ էին, և հենց այդ պահին Վեհափառ Հայրապետից զանգ եկավ: Կապը շատ թույլ էր, ընդհատվեց, բայց այդ համատարած պայթյունների մեջ երբ ազգիդ Հայրապետը քեզ ասում է՝ Պի՛նդ կացեք, այլևս որևէ դժվարություն քեզ համար անհաղթահարելի չէ… Մեկ խոսք էր դա, բայց այդ խոսքն ուժ էր, որ փոխանցվեց մեզ, և մենք անպարտ դարձանք… Խոսքը, այո՛, զորություն ունի, ինչպես Քրիստոս երեք տարի ընդամենը խոսեց, խոսքով բժշկեց, խոսքով սեր քարոզեց, և երկու հազար տարի է՝ հաղթում է աշխարհում ու կհաղթի մինչև վերջ: Շատ կարևոր է՝ ցավի ու դժվարության մեջ մեկս մյուսին փոխանցենք զորություն, որ ամուր լինենք:

Չեմ մոռանա, երբ որ մի օր տեր հայրը խոսեց տեղի գյուղապետի հետ (ինչ-որ բան պետք է ուղարկեին մեզ), այդ գյուղապետն ասաց. «Եթե իրենք այնտեղ են, մենք այստեղ մտահոգվելու ոչինչ չունենք»: Այսինքն՝ դու հասկանում ես, որ քո հասարակ քայլով, քո մի գործով, որ ամեն հայի և հոգևորականի պարտքն է ազգի նկատմամբ, կարող ես մարդկանց մեջ ոգի ապրեցնել, կամք, սեր վերարթնացնել, և այդ կերպ է, որ գոյանում, ձևակերպվում ու բյուրեղանում է ազգային մտածողությունը:

— Վեհափառի՝ Դադիվանքի հետ կապված քաջախորհուրդ նախաձեռնությունը միտված էր կանխելու Դադիվանքի մշակութային սպանդը, հայկական պահելու վանքը....

— 2020 թ. պատերազմին հաջորդած ամբողջ ընթացքում Արցախի խնդիրը համար մեկ խնդիրն էր Հայ Եկեղեցու կյանքում՝ Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ, որ ամեն պահ, ամեն խնդրի հետ կապված, հնարավորություն էր գործադրում՝ որևէ ձևով մի բան փրկելու, մի բան պահպանելու: Երբ հանձնվեց Քարվաճառը, որտեղ նաև Դադիվանքն է, Վեհափառ Հայրապետի անմիջական միջնորդությամբ էր, այո՛, որ վանքը մնաց հայկական: Նա դիմեց Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլին, ՌԴ նախագահ Վ. Պուտինին, որպեսզի Դադիվանքը շարունակի գործել այնպես, ինչպես եղել է, և հուրախություն բոլորիս՝ Կաթողիկոսի կամքն ընդառաջվեց: Ռուս խաղաղապահների զորակցությամբ և հոգևորականներիս ներկայությամբ Դադիվանքի պարիսպներից ներս կարողացանք պահպանել հայկական շունչն ու ոգին: Երկու տարի մեր հոգևորականներն այնտեղ հոգևոր ծառայություն մատուցեցին, և այդ ծառայությունը շնորհ էր, ու շնորհ եղավ նաև ինձ…

— Այո՛, դա իսկապես միսիա էր, առաքելություն, և Դուք այդ առաքելությունն իրագործելու ընտրյալների մեջ էիք…

— Միշտ ասում եմ՝ մեծագույն պաշտոն եմ համարում Դադիվանքի վանահայր լինելը: Ինչո՞ւ եմ այդպես գտնում, որովհետև Դադիվանքի իրականությունը դուրս էր բոլոր առաքելություններից ու տրամաբանությունից, որովհետև այդ փակ պայմաններում քո հայոց հողի մեկ կտորը մնացել էր հայկական քո՛ շնորհիվ: Եվ բացառիկությունը դրա մեջ էր: Հասկանում ես, որ հողը քո ներկայությամբ է պահպանվում, սիրելով է պահվում, պահպանվում է այնտեղ ապրելով: Ծառը պտղատու է դառնում, երբ դու այն խնամում ես, ջրում ես… Դադիվանքը լավագույն առիթն էր իմ կյանքում ազգային ծառայություն մատուցելու, և խորին շնորհակալություն ազգիս Վեհափառ Հայրապետին, որ այդ առիթն ընձեռեց ինձ… Միևնույն ժամանակ այդ ընթացքում սկսեցի ավելի՛ սիրել իմ հայրենիքը, իմ եկեղեցին, շոշափելի զգացողություն ունեցա՝ ինչպես է պահպանվում հողը:

— Հետադարձ հայացքով երբ գնահատում եք այդ նոր Գողգոթայի ճանապարհը, կա՞ր հնարավոր ելք, որ չի գտնվել, կամ՝ նախաձեռնություն, որ չի արվել: Ինչո՞ւ արցախահայության տեղահանություն եղավ. ժողովրդի դիմադրողականությունն էր սպառվել, պայքարելու կամքն էր, արդյոք, պակասել, թե՞ ուժերն անհամեմատելի էին, աշխարհաքաղաքական հերթական խարդավանքների զոհողությո՞ւն էր, և դիմադրության շարունակության դեպքում ցեղասպանության կենթարկվե՞ր արցախահայությունը, իսկ Արցախը դարձյա՞լ կբռնազավթվեր թշնամու կողմից:

— Ցավոք, ունենք շատ դառը, տխուր իրականություն, բայց այս իրականությունը հասկանալու համար պետք է թերթենք մեր պատմության էջերը, և այնտեղ շատ բան կհասկանանք: Այս ամենին, որ կատարվեց մեր ժամանակներում, մենք պատմության մեջ ականատես ենք եղել: Կարսը՝ այդ հզոր բերդաքաղաքը, հանձնվեց, և երբ կարդում էի Կարսի անկման պատմությունը, ինձ համար միշտ ցավ էր՝ ինչպե՞ս եղավ: Այդ ինչպես-ի պատասխանը ես այն ժամանակ չստացա, բայց այսօր ականատես եղա…

Ի՞նչ եղավ. եղավ մեկը, որ չարեց իր գործը, եղավ մեկը, որ չկանգնեց այնտեղ, որտեղ պետք է կանգներ, այսինքն՝ սխալները նախ մեր մեջ են: Որևէ խնդրի պարագայում երբ ուզում ես ճիշտ լուծում գտնել, առաջինը պետք է քննես ինքդ քեզ, ճանաչես ինքդ քեզ: Մենք մեզ չճանաչեցինք, մեր պատմությունը չճանաչեցինք, հայ գենետիկան, մտածողությունը չկարողացանք ճանաչել: Ամեն անգամ մեզ թվաց՝ սա նոր է, այլ իրավիճակ է. ո՛չ, սա նոր չէ, սա եղել է, այս պատմության ականատես եղել էինք, պարզապես մենք պատմությունից դասեր չքաղեցինք: Պատմությունը հնարավորություն ունենք ընթերցելու, բայց ոչ հետադարձ խմբագրելու: Խմբագրությունը կատարվում է ներկայով, այսինքն՝ պատմությունից ստացած դառը հարվածները մենք պետք է դարձնենք ուժ, ազգային միասնականության հիմք՝ Հայ Եկեղեցու կարևորությունն ու դերն ավելի արժևորելով մեր պատմության, ազգային գիտակցության մեջ, որպեսզի այլևս երբեք սկզբունքով չլիներ այն, ինչ եղավ, ինչին ականատես դարձանք:

Հիմա բոլորս բողոքում ենք, աղաղակում ենք, բայց բողոքելով չէ, աղաղակելով չէ, այլ գործելով է: Երբ որ բժիշկը հարազատիդ ճիշտ բուժում չի նշանակում, և նա մահանում է, կամ հիվանդությունն ավելի է խորանում, որևէ պատճառաբանությամբ չես կարող արդարացնել դա: Ժողովրդական խոսք կա՝ բժշկի սխալը հողն է ծածկում: Եվ տգիտության սխալը մնում է, ու մենք մեր պատմության տգետը եղանք, որ չկարողացանք ճիշտ գնահատել, հարվածներն ուժի վերածել, ձեռքբերումներն ավելի խորն ըմբռնել ու պահել, որպեսզի այլևս ամոթալի էջեր չունենայինք: Այս իրականությամբ մենք ևս մի ցավալի ու ամոթալի էջ ավելացրինք մեր պատմության մեջ: Բայց հայոց պատմության ամոթալի էջեր նորից սրբագրել ենք, և այս իրականությունն էլ սրբագրման կարիք ունի:

— Հայր Դերենիկ, երկու սարկավագների՝ Հովհաննեսի ու Արսենի հետ շուրջ 420 օր մնացիք Դադիվանքում՝ պաշարված թշնամու զորքի կողմից, առանց հավատացյալների: Միանձնության, մեկուսության շրջան էր ոչ դասական իմաստով: Ծանր ու դժվար այդ ամիսներին ինչո՞վ էիք լցնում օրը, կենտրոնանո՞ւմ էիք արդյոք հոգևոր առաքելության մեջ, ինչպե՞ս էիք վերանում ամեն պահ սպառնացող ծանր կորուստների վտանգից:

— *Գիշերով չի վերջանում օրը…* Մարդկային սովորական կյանքում հետևյալն է. առավոտյան արթնանում ենք, աշխատում, երեկոն գալիս է, ամփոփում ենք օրը, քուն մտնում, և այլևս վերջանում է օրը: Բայց Դադիվանքի օրերը չվերջացող օրեր էին… Երբեք այնպիսի զգացողություն չենք ունեցել, որ գիշերը եկավ, ուրեմն վերջացավ օրը: Ո՛չ, ամեն ժամն ապրելու առիթ էր, ամեն ժամը գործելու առիթ էր, ամեն ժամն զգոն լինելու առիթ էր այնտեղ, և այդպես երկրագունդը կատարում էր իր պտույտը, բայց մեր ներկայությունը, գործունեությունը մնում էին նույնը…

24 ժամը նույն պատերի մեջ էր անցնում: Անգամ քայլելու համար սահման կար. պիտի մինչև պատը հասնեիր ու վերադառնայիր, բայց ես չէի սիրում հասնել պատին, որովհետև այդտեղ գրված էր՝ stop: Իսկ ինձ համար իմ հայրենիքն անսահմանություն է…

Սարկավագների ներկայությունն այնտեղ, իսկապես, շատ լուսավոր էր. գիտակից, եկեղեցասեր նվիրյալներ էին և ինձ հետ ամբողջությամբ կիսում էին այն, ինչը հարիր է հոգևորականին, ազգային ոգուն: Եվ մենք կարողանում էինք մեր եկեղեցական արարողությունները ամբողջությամբ կատարել՝ մեծ սիրով ու հաճույքով: Միշտ այն զգացողությունն ունեինք, որ մի օր վանքը պետք է հավատացյալներով լցվի: Սպասում էի այն երջանիկ վայրկյանին, երբ թեքվեի՝ խորանիս խաղաղություն տալու, առջևս լինեն հավատացյալներ: Այդ երջանիկ ակնթարթը՝ Դադիվանքում հավատավոր մարդկանց աչքերը տեսնելու, միշտ երազել եմ, բայց, ցավ ի սիրտ, մեր սպասումը երկար մնաց ու դեռ կմնա, մինչև նորից ծագի հայոց ազգի պայծառ արշալույսը, և մեր վանքերի մեջ հնչի հայ աղոթքը…

Հայոց աղոթքն Արևմտյան Հայաստանում էլ լռեց, մեր շատ վանքերում ու եկեղեցիներում լռեց: Անցել են ժամանակներ, ու հիմա փորձում են մեզ պարտադրել, որ Արևմտյան Հայաստանն այլևս անցյալ է: Բայց ոչ միայն պատմությունն է խոսում, այլև արյան կանչը, նախնիների ոգին, արմատների հիշողությունը: Կա գենետիկ հիշողություն, որ մարդուն ոչինչ մոռանալ չի տալիս, ամեն ինչ դառնում է ի շրջանս յուր, մենք բոլորս դառնում ենք մեր արմատներին: ➥ էջ 5

Քարվաճառի Սբ. Կարապետի վանքը

2020 թ. սեպտեմբերին 27-ին սկսված և 44 օր տևած ադրբեջան-թուրքական ռազմական ագրեսիան ընդհանուր աննկարագրելի ու աննախադեպ կործանարար հետևանքներ ունեցավ Արցախի համար: 2020 թ. նոյեմբերի 10-ի եռակողմ համաձայնագրով Արցախի Հանրապետության տարածքի մի մասը՝ այդ թվում և ամբողջ Քարվաճառի շրջանը, առանց ռազմական գործողությունների՝ հանձնվեց Ադրբեջանին: Շրջանի հայ ազգաբնակչությանը ժամանակ տրվեց՝ արտագաղթելու: Կարծես որոշակի տարբերություններով կրկնվեցին 18-րդ դարի պատմաքաղաքական իրադարձությունները, երբ բազմահազարամյա պատմության մեջ առաջին անգամ իրենց հնամենի բնակավայրերը ստիպված էր լքել պատմական Վայկունիք գավառի, միջնադարյան Ծարա կամ Վերին Խաչենի իշխանության բնիկ հայ ժողովուրդը: Հայկական, ինչպես նաև ռուսական վավերագրերով այդ ժամանակներում գրեթե ողջ գավառը զրկվել էր հայ ազգաբնակչությունից, որի հետևանքով այստեղ աստիճանաբար սկսեցին բնավորվել եկվոր մահմեդական ցեղերը:

Քաղաքական այդ իրադարձությունները, մեղմ ասած, բացասական հետևանքներ ունեցան նաև հայկական հնամենի բնակավայրերի պատմամշակութային ժառանգության պահպանման տեսանկյունից: Այսպես՝ 18-րդ դարից ի վեր սկսվեց հայկական գավառի ողջ տարածքի հատկապես քրիստոնեահենք պատմամշակութային ժառանգության անխնա ոչնչացումը: Սակայն այդ ժառանգությունն այնքան բազմաշերտ ու բազմաբովանդակ էր, որ շուրջ երեքդարյա ավերումից հետո, այնուամենայնիվ, պահպանվեց, ու փրկվեց նրա որոշակի մասը: Անշուշտ, պահպանվածը պատմական սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններով գոյություն ունեցածին անհամեմատ է, բայց և այնպես ակնհայտորեն մատնանշում է տվյալ տարածքի բնիկ ժողովրդի ազգային ինքնատիպությունն ու մշակութային կերպարը:

Քարվաճառի հայկական մշակութային ժառանգության ուսումնասիրության իրական հնարավորություններ ստեղծվել են 1993 թ. ապրիլին՝ տարածքի ազատագրումից հետո միայն: Հարկ ենք համարում ընդգծել նաև, որ հաճախ հանրության ուշադրության կենտրոնում հայտնվում են միայն կանգուն ու գործող վանքերն ու եկեղեցիները, այնինչ պետք է հատուկ ուշադրության արժանանան նաև հոգևոր այն կենտրոնները, որոնք իրենց գոյության ընթացքում կերտել են հոգևոր-պատմական հարուստ կենսագրություն, սակայն պատմության դժնդակ արհավիրքների հորձանուտում ենթարկվել են կործանարար հարվածների: Հոգևոր նման կենտրոնների շարքին է դասվում Քարվաճառի շրջանի 18-րդ դարից անմարդաբնակ դարձած Չափնի գյուղի Սբ. Կարապետի վանքը:

Չափնի գյուղատեղին ներառված է Քնարավանի հուշարձանների ցանկում: Ընդհանուր առմամբ բնակավայրի տարածքում վկայագրվել ու պետական հաշվառման ցուցակում ներառվել է 76 պատմական հուշարձան: Չափնին գտնվում է Շահումյանի (Քարվաճառի) շրջանում՝ Քնարավան գյուղի հյուսիսային մասում՝ Լև գետի ափին: Գյուղի հյուսիսարևմտյան վերնամասում է գտնվում Սբ. Կարապետի վանական համալիրը: 1860-ական թվականներին տեղավայր այցելած Ս. Ջալալյանցը գյուղը հիշատակել է Ջանկի ձևով՝ նկարագրելով նաև բնակավայրի և վանքի՝ արդեն 19-րդ դարում տիրող ողբալի վիճակը. «Այս գյուղի ողբալի ավերակները ցույց են տալիս [իր] նախկին հզոր վիճակը և միայն վկայում են իրենց նախկին նախանձելի փառքի մասին: Վերին կողմում Սուրբ Կարապետի անունով եկեղեցին է, գերեզմանոցը և այստեղ բնակվող իշխանների մեծաշեն տների ավերակները: Եկեղեցու շինությունը միջին է, կառուցված է անհարթ քարերով. [եկեղեցուն] կից երեք փոքրիկ և անշուք մատուռներ են, որոնցում իշխանների՝ առանց տապանագրի շիրմաքարեր են: Այս մատուռներին կից մի քառակողմ, ձեռակերտ քարասալ է, որը երկու կողմից դռներ ունի: Սրա վրա կառուցված է վայելուչ գմբեթով մի մատուռ, որի ներսում կա խաչքար՝ վրան գրված. «Հայոց ՉԽԴ (744) թվին. ես՝ Ուքմանս և Սուքմանս, կանգնեցրինք այս խաչը, հանուն մեր հոր՝ Աշոտի և մոր: Հիշեցեք [ձեր] աղոթքներում»: Նկատելի է, որ հոգևորական-պատմագիրը, «այստեղ բնակվող իշխանների մեծաշեն տների ավերակները» հատուկ շեշտելով, փորձում է հասկացնել, որ իրականում պատմական կարևոր տեղավայրի մասին է խոսքը, և Մ. Կաղանկատվացու՝ դեռևս 7-րդ դարում տեղի ունեցած իրադարձությունների նկարագրության մեջբերումը՝ կապված հիշյալ վանքի հետ, հենց դրա առհավատչյան է: Փաստորեն, ըստ Ս. Ջալալյանցի, հենց այս Սբ. Կարապետի վանքին է վերաբերում Մ. Կաղանկատվացու վկայությունը. «Այդ ժամանակ երկու եպիսկոպոսները՝ Դավիթն ու Հովելը, կամավոր կերպով ընդունում են հայրապետի պատվերները և հրաժեշտ տալով՝ Սուրբ Հոգու առաջնորդությամբ գալիս են Մեծկողմանքի Ռոստակ գավառը՝ Չղախյան հովիտը՝ Ասպարիսաձև դաշտակը Տրտու գետի ափին, որը գտնվում է Մեծիրանքի վիճակում: Եկան տեղավորվեցին նշանավոր անտառում՝ մի քիչ բարձր տեղում՝ սարավանդակ վայրում: Այնտեղ կար մի փայտաշեն մատուռ՝ խեցիներով երեսպատված, խաչանիշ զարդաքանդակներով դրվագված, պատերը զարդափայլ գեղեցկությամբ հորինված»:

Չափնի գյուղի աշխարհագրական անառիկ դիրքը և պատմական որոշ աղբյուրներում պահպանված տեղեկությունները հիմք են տալիս մտածելու, որ վերոհիշյալ բնակավայրն իշխանանիստ է եղել, ամենայն հավանականությամբ Սբ. Կարապետի վանքն էլ՝ եպիսկոպոսանիստ: Ս. Ջալալյանցը, վկայակոչելով Վարդաշեն գյուղի եկեղեցում պահվող երկաթագիր Ավետարանը, պատմում է, որ նրանում ներկայացված են 5–9-րդ դարերի պատմաքաղաքական իրողություններին վերաբերող՝ տվյալ դեպքում մասնավորապես մեզ հետաքրքրող վերոհիշյալ բնակավայրին ու վանքին առնչվող հետաքրքիր ու արժանահիշատակ տեղեկություններ. «Այստեղ երևում է, որ սուրբ և մեծ Վարդանի պատերազմից հետո մեր շատ իշխաններ պարսիկների, [ապա] արաբների պատճառով ապավինեցին այս խորաձորերին և ընտանիքներով ամրացան հենց այստեղ. կառուցեցին տներ ու ամրոցներ և ապրեցին մշտական ապահովության մեջ: Սրանցից մեկն էր Բակ իշխանը....»:

Ըստ հիշյալ Ավետարանի՝ 9-րդ դարում արաբական զորքի՝ ազգությամբ թուրք զորավար Բուղայի պատժիչ արշավանքի ժամանակ հայ իշխանները, ամրանալով Չափնիում, դիմադրեցին զավթիչներին: Սակայն մատնության պատճառով Բուղային հաջողվեց խաբեությամբ այդ անմատչելի ձորերից հանել ու գերության տանել հայ իշխաններին: Այստեղ ապաստանած հայ իշխանների հետ միասին Բուղային հաջողվել էր ձերբակալել նաև Խաչենի Սահլ Սմբատյան իշխանին ու նրա որդի Ատրներսեհին, որի նստավայրն էր Չափնիի մերձակայքում գտնվող Լոհաբերդը (Հանդաբերդ), լեռնային Ուտիքի Սևորդիների Ստեփանոս Կոն իշխանին:

Հարկ է նկատել, որ ուսումնասիրողները, հիմք ընդունելով Սբ. Կարապետի վանքի տարածքում գտնված մի արձանագիր խաչքարի վրա առկա 1275 թվագրությունը, ենթադրել են, որ վանքի շինությունները կառուցվել են հիշյալ թվականին: Սակայն, մեր կարծիքով, անուշադրության է մատնվել պատմագրի վերոնշյալ հաղորդումը:

Այսպիսով՝ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Մ. Կաղանկատվացու հիշյալ վկայությունը վերաբերում է 7-րդ դարի իրողություններին, ապա կարող ենք նաև եզրակացնել, որ Սբ. Կարապետի վանքը նշյալ ժամանակներում արդեն ոչ միայն գործող, այլև Հայոց արևելից կողմերի հոգևոր նշանավոր ու կարևոր կենտրոններից էր: Իսկ ինչ վերաբերում է հիշյալ արձանագրությանը, ապա ամենայն հավանականությամբ այն մատնանշում է վանական համալիրի որոշ շինությունների կառուցումը, մի իրողություն, որ հայկական բազմաթիվ վանքերի ու եկեղեցիների օրինակներով արդեն իսկ տարածված երևույթ էր:

Ինչպես գյուղը, այնպես և վանական համալիրը խորհրդային ժամանակներում արդեն հիմնականում ավերակված վիճակում էին:

Վանական համալիրի արևմտյան մասում գտնվում էր կիսավեր եկեղեցին, որն արտաքուստ քառակուսի տեսք ունի՝ 5,5 մ կողմերով: Թաղածածկ, ուղղանկյուն խորանով, հյուսիսային կողմում զույգ ավանդատներով եկեղեցին կառուցված է անմշակ քարերով ու կրաշաղախով: Միակ մուտքը բացվում է արևմտյան կողմից նրան կցված գավթի մեջ, որը նույնպես ավերված է: Գավթից ընդամենը մնացել էին որոշակի տեղերում 1 մ բարձրությամբ պատերի հատվածներ:

Եկեղեցուց 24–25 մ հյուսիս-արևելք դեռևս կանգուն խաչքարով մահարձանի թաղակապ շենքն է, որը եղել է երկհարկանի դամբարան: Ներքևի հարկը քառանկյունի է, իսկ երկրորդ հարկը, ըստ ուսումնասիրողների, կառուցված էր չորս միակտոր քարերի սյուներից, որի վրա եղել է մի փոքր գմբեթ: Շինության վրա տեղադրված է մի գեղաքանդակ խաչքար (չափերը՝ 190x90x18 մ)՝ յոթատող արձանագրությամբ և 1275 թվագրությամբ: Մահարձանից մի քանի մետր հյուսիս, մասամբ հողի մեջ թաղված վիճակում, պահպանվում էին մի փոքրիկ մատուռ և այլ շինությունների մնացորդներ: Հարկ է նաև ընդգծել, որ Չափնու Սբ. Կարապետ վանական համալիրը վերջին շրջանում համակողմանի ուսումնասիրած Ս. Կարապետյանը տեղում լուսանկարել ու չափագրել է տակավին պահպանվող «...ավելի քան երկու տասնյակ գեղաքանդակ (մի քանիսը նաև արձանագիր) խաչքարեր: Փլատակների մեջ են նաև թերևս Սբ. Կրապետ եկեղեցուն պատկանած երեսապատի արձանագիր սրբատաշ մի քանի քարեր»:

Ի դեպ՝ Սբ. Կարապետ վանքի տարածքում վկայագրվել և պետական ցուցակներում ներառվել է 18 խաչքար, որոնց թվում էր վերոնշյալ՝ 1275 թվագրությամբ արձանագիր խաչքարը: Նկատենք, որ տարածքում պահպանվող և պետական ցուցակներում ներառված խաչքարերի մի մասն իր վրա ունի նաև հստակ գրված թվական՝ 1187, 1237, 1246, 1247, 1249 և այլն:

Վանական համալիրից արևմուտք և հյուսիս տարածվում է գերեզմանոցը, որտեղ մինչև վերջերս պահպանվում էր երկու խաչքար՝ նույնպես վկայագրված 13-րդ դարի ժամանակագրությամբ: Սակայն պատմական աղբյուրների տեղեկությունները, այնուամենայնիվ, մատնացույց են անում, որ Սբ. Կարապետ վանական համալիրի տարածքը հնագիտական պատշաճ ուսումնասիրության կարիք ուներ, ինչը, անկասկած, ավելի ճշգրիտ ու հստակ կբացահայտեր հոգևոր կենտրոնի կառուցման ու գործունեության ժամանակահատվածները:

Երբեմնի ընդարձակ գերեզմանատունը դեռևս խորհրդային ժամանակներում թուրքերի կողմից ավերվել էր, իսկ տեղահանված տապանաքարերը ցաք ու ցրիվ ընկած կամ կուտակված էին գերեզմանոցի ներքևի հատվածում:

Վանական վերոհիշյալ համալիրի շրջակայքին, որտեղ միջնադարում գտնվում էին մի շարք գյուղեր, նոր շունչ հաղորդելու և նախկին Պարտավ-Դվին ճանապարհի վաղեմի նշանակությունն այս անգամ նոր իմաստով վերականգնելու նկատառումով (Արցախի Հանրապետության գոյության ժամանակ այդ նույն հատվածով էր անցնում Մարտակերտ–Վարդենիս–Երևան ճանապարհը) մայրուղու հարևանությամբ կառուցվեց Քնարավան գյուղը: 2020 թ. նոյեմբերին վերոհիշյալ տարածքն Ադրբեջանին անցնելուց հետո ավերվել է նաև Քնարավանը:

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ
պ. գ. դ., պրոֆեսոր

«Վանքը մնաց մեր մեջ, մենք մնացինք վանքում»

← էջ 3

Օրինակ՝ ականատես ենք լինում, թե ինչպես օտար երկրում ապրող հայ սերնդակիցներ, անգամ շատ խորը չիմանալով՝ ովքեր են եղել իրենց պապերը, որտեղից են եկել, չխոսելով հայերեն, ոգու կանչով վերադառնում են այնտեղ, որտեղից սերվել են: Հիշենք Վ. Սարոյանի ստեղծագործությունը՝ «Իմ սիրտը լեռներում է»: Եվ իմ սիրտն էլ մնաց այնտեղ՝ Դադիվանքի մեջ, Դադիվանքն էլ հիմա ապրում է իմ մեջ...

Դադիվանքը, ընդհանրապես, հավաքական կերպար է, հավաքական խորհուրդ, որ ցույց է տալիս՝ ինչ է կորուստը: Դադիվանքը մեր հոգու սպին է, որ մենք երբեք չպետք է մոռանանք: Գիտե՞ք, ես մտածում եմ՝ մեր ազգային մտածողությունը նման է ծերունու հիշողության, որ վատ է հիշում և շատ ժամանակ մոռանում է....

— Բայց երբեմն պայծառանում է....

— Այդ պայծառացմանն ենք այժմ սպասում: Մենք մոռանում ենք մեր պատմությունը՝ ով ենք մենք, որտեղից ենք գալիս: Երբ նայում եմ մեր ժողովրդի ճանապարհին, աչքիս առաջ պատկերանում է Գողգոթան, որով հայոց խաչը բարձրացնում ենք չարչարանքներով: Երբ Տերը բարձրացնում էր խաչը, գիտակցում էր, որ խաչելությամբ պետք է լինեն մեղքերի թողությունը և հարությունը: Նա սիրով էր տանում Իր խաչը՝ չարչարանքների միջից ասելով. «Տե՛ր, ներիր նրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում»: Հիմա մենք պետք է պատվով հասցնենք մեր խաչը Գողգոթայի գագաթ, որպեսզի ազգի հարությունը շուտ հասնի: Պետք է ապավինենք Տիրոջը, Նրանից բխեցնենք մեր ամբողջ ընթացքը և գործենք սիրո տրամաբանությամբ: *Սերը գոյական է, բայց մենք այն պետք է վերածենք բայի, այսինքն՝ գործողության...*

Ինչ վերաբերում է ժամանակի հագեցվածության հարցին. օրը լցնում էինք եկեղեցական ծիսական արարողություններով, հետո ամեն մեկս ունեինք մեր ժամանակը՝ կարդալու, արարելու, վանքի բակը բարեկարգելու, ծաղկեցնելու, որպեսզի նաև կողքից ինքնաբուխ ընկալելի լիներ, որ եկել ենք վանք ոչ թե որպես հյուր, այլ որպես տեր:

Միաժամանակ, իսկապես, լավագույն առիթ էր ստեղծագործելու. Դադիվանքի ամեն լուսաբացը, մայրամուտը, բնության եղանակային փոփոխությունները անսահման ներշնչանքի, խորհելու, Աստծո հրաշքը ճանաչելու, արարչության գաղտնիքն զգալու առիթ էին: Այո՛, նաև վեպ գրեցի ու ամփոփեցի՝ «Բարևս նամակը կարդացողներին և լսողներին», ավելի խոր, ավելի գիտակից զգացողություններով:

— Արվեստի զարմանահրաշ ուժը, որ ճեղքեց շուրջկալող պարիսպները և թռիչք արձանագրեց: Իրո՛ք, ուղի՛ղ իմաստով: Վանքի պաշարումը նպաստեց Ձեր ստեղծագործական վերելքին: Ոգեշնչվածություն, անշուշտ, չկար, կար, երևի, հոգեկան բևեռացում, որը և գեղարվեստական մակարդակ ապահովեց: Ձեր գիրը թև ունի, պատկերակերտման արվեստը նույնպես առանձնանում է և առաջին հերթին՝ վանքի ոգեղեն ներկայության առումով:

Ձեր գրույցի ոճից նույնպես ենթադրելի է, որ ստեղծագործում եք: Կա՞ն ուրիշ պայծառ հիշողություններ, համատարած տխրությունն ու անորոշությունը բեկող գեղեցիկ, անմոռանալի այլ դրվագներ:

— Շատ են դրանք, կպատմեմ մեկը: Չորս պատերի մեջ մնալով՝ կապվել էինք ամեն ինչի հետ: Այնտեղ կատուներ կային, բերում էին իրենց ձագերին, պահում էինք նրանց: Ամեն սարկավագ մի կատու ուներ, ես՝ ևս: Իմ կատուն հստակ ժամ ուներ սենյակ գալու: Այդ օրը գիշերվա ժամը հինգն էր, շուտ եկավ, զարմացա, մի քանի անգամ ծանր մլավեց դռանս առաջ: Մտածեցի՝ բացե՞մ, թե՞ չբացեմ այս ժամին, և բացեցի՝ որոշելով, եթե եկել է, թող ներս մտնի: Մութ էր, լույսը վառեցի հասկանալու համար՝ ինչ է եղել: Տեսա, որ թակարդն էր ընկել, և որովայնի կողմից սեղմված էր: Ձայն տվեցի սարկավագներին, ռուս խաղաղապահներն էլ եկան, միասին կարողացանք մի կերպ ազատել: Եթե մի կես ժամ ուշանար, կենդանին կմահանար: Եվ գիտե՞ք՝ այստեղ ինչն է հետաքրքիր. նա կենդանի է, բայց կենդանին հավատ ունի: Նա չարչարանքներով ազատվել էր թակարդից, հասել իմ սենյակ այն գիտակցումով, որ այնտեղ ինքը կփրկվի: Եթե կենդանին պարզ գիտակցում է, որ հասնելով տիրոջ մոտ՝ կփրկվի, ապա մարդը, որ խելացի է, իմաստուն, տրամաբանող, վերլուծող, արդյոք ունի՞ այդ հավատն իր Տիրոջ նկատմամբ, որ Տերը կփրկի իրեն: Բնությունից, կյանքից շատ բան կարող ենք սովորել: Սա մի օրինակ է՝ գուցե շատ մարդկանց ոչինչ չտվող, բայց միևնույն ժամանակ սա փոքրիկ մի կայծ է՝ կյանքը հասկանալու:

— Պաշարված Դադիվանքից ու Արցախից ինչպե՞ս տարհանեցին Ձեզ և ամբողջ ժամանակ Ձեզ հետ եղած սարկավագներին: Ի՞նչ տեսաք ու զգացիք պատերազմի ժամանակ և տեղահանության ճանապարհին:

— Անմիջապես մեր աչքի առաջ էր տեղի ունենում, իսկ ամենածանրը այն պահն էր, երբ դու տեսնում ես՝ թշնամական զորքը և տեխնիկան գնում են քո հայրենիքը գրավելու: Քո հայրենի հողի վրայով գնում են քո հայրենիքը զավթելու...

Պատմության մեջ որ կարդում էի, անգամ գրքի էջերի վրա էի բարկանում, ցավ էի ապրում: Ոգիդ աղաղակում է՝ ինչո՞ւ պետք է կորցնեինք մեր երկիրը: Այդքանը՝ հետադարձ հայացքով: Բայց երբ իրականության մեջ ես տեսնում այդ ամենը, իսկապես շատ ծանր է... Ծանր էր ամեն պահը, որովհետև անգիր էի արել վանքի ամեն մի քարը, ամեն ծառի ու ծաղկի հանդեպ հետաքրքրություն կար... Եվ այդ հրաժեշտի պահը... Երբ մեքենան շարժվեց, և կամաց-կամաց հեռանում էր Դադիվանքը, ես հասկացա, որ *պարզապես ֆիզիկապես եմ հեռանում, որովհետև իմ հոգին մնաց այնտեղ՝ հայոց Դադիվանքի մեջ...*

Կյանքիս բացառիկ օրերն ու ժամերն են եղել, որ ես, մեղմ ասած, ատել եմ այն, ինչ տեսել եմ, որովհետև երբ գնում էի Արցախ, տեսնում էի ծաղկուն Ստեփանակերտը, Շուշին, Հադրութը, Մարտակերտը, միշտ վայելել եմ հայոց այդ աշխարհը, և իմ մտքով երբևէ չէր կարող անցնել այն, ինչ վերջին օրերին տեսա: Տեսա ամայացած գյուղեր ու քաղաքներ, լքված տներ, ավերվող ճակատագրեր... Խաչքարերը, զոհված տղաների հուշաքարերը... Մտատանջվում էի՝ այստեղ զոհվել են՝ այս լեռը ազատագրելու համար, այստեղ մաքառել են՝ այս վանքը պահելու համար, հիմա հասնես մի պահի, որ երկիրը լցվի թուրքերո՞վ, և դու տեսնես՝ ինչպես են նրանք քանդում, ավերում, ծաղրում: Մտքիցս դուրս չէր գալիս «Ձորի Միրոն». «Ո՞ւմ թողիր քո էրգիր, Միրո՛.... Շների՞ն թողիր...»: Քո ծաղկուն հայրենիքը, որի հողի վրա գետերի չափ արյուն է հոսել, հայո՛ց արյունն է հոսել: Այն, ինչ ես տեսա այդ օրերին, երանի երբևէ որևէ հայ առիթ չունենա այլևս տեսնելու...

Ստեցի՛ աչքերս, որ անհայ Արցախ տեսան...

Եվ այսօր որքան էլ փորձեն կեղծել պատմությունը, զեղծարարությամբ զբաղվել, բայց քարերն անգամ խոսուն վկայություն են, քարերն աղաղակում են իրենց հայկականությամբ: Ինչպե՞ս կարող են 1700-ամյա Ամարասի, հազարամյա մյուս վանքերի կողքին կանգնել և հայտարարել՝ հայկական չեն: Այդ վանքերը որ կային, դուք չկայիք: Ամեն ինչի հիմքը կարևոր է, չէ՞: Արցախի արմատները մեր սրբությունն են և զորացնում էին հայոց աշխարհը....

— Դա ճշմարտություն է, բայց, ցավոք, արդարությունը մեռած է աշխարհում, այն ապրում է միայն գրքերի մեջ: Աշխարհը շահն է կառավարում, ուժն է վճռում ամեն ինչ....

— Ճիշտ եք. այդ օրերին ես հասկացա, որ ճշմարտությունը կարիք ունի ճշմարտության, արդարությունը՝ արդարության: Պետք է փորձենք ճիշտ հասկանալ պահը և հայտնի կկվի պես գիշերցերեկ աղաղակենք, որ ոսոխներն իմանան՝ միշտ արթուն ենք: Ինչպես Տերը մեզ պատվիրեց. «Արթուն կացե՛ք և ամեն ժամ աղոթեցե՛ք»: Մեր Հայրապետը՝ Ներսես Շնորհալին, արթուն մնալու 24-ժամյա աղոթք գրեց՝ «Հավատով խոստովանիմ», որ ամենժամյա զգոնություն ունենանք անձանձիր կերպով ու նվիրումով: Մի բան էլ. վախը մեր միջից պետք է հանենք, մենք Հայկի սերունդն ենք. Հայկը անվեհեր, պայքարող, ըմբոստ տեսակ էր և իր հողը պահեց իր ոգո՛ւ շնորհիվ: Մեր Տերը նույնպես մեզ ասում է՝ Մի՛ վախեցիր: Աստվածաշնչի մեջ 365 անգամ հնչում է «Մի՛ վախեցիր» արտահայտությունը, այո՛, տարվա ամեն օրվա համար, որովհետև վախը մեզ միշտ զսպաշապիկի պես սեղմում է, որ մենք չգործենք, չարարենք, չսիրենք: Ավելին. ուր վախ կա, այնտեղ կա ձախողում, կա նահանջ և այլն:

— Բայց ստեղծված իրավիճակում Արցախում դիմադրությունը շարունակելը կնշանակեր գնալ ամբողջ զորքի անարդյունք մահվան, ժողովրդին մատնել ցեղասպանության: Այսինքն՝ մեր մահը ոչինչ չէր փոխի Արցախի ճակատագրում....

— Արցախի պարագայում, այո՛, մենք կորցրել էինք մեր դիմադրողականությունը, այլևս մնացել էինք միայնակ, դաժանորեն միայնակ, և այդ իրադրության մեջ գնալ պարզապես մահվա՝ նշանակում էր չպայքարել....

— Կորցնել վաղվա պայքարի հնարավորությունը, ուժերը վերագտնելու ռազմավարությունը....

— Միանշանակ այդպես է, պատերազմի ժամանակ ստիպած պետք է նաև նահանջել: Չպետք է քո ամբողջ զորքը զոհես՝ պյուռոսյան հաղթանակ արձանագրելու: Երբ որ զինվորը կորցնում է պայքարելու հնարավորությունը, այդ զինվորին չպետք է մենակ թողնել...

Առհասարակ, երբ որ նայում ես մարդուս ճանապարհին, հասկանում ես, որ մարդկային ամբողջ կյանքը պայքար է. մարդը պայքարելով է լույս աշխարհ գալիս, պայքարելով է ապրում, պայքարով մեռնում: Պայքարը պետք է ընդունենք որպես կյանքի բացարձակ ճշմարտություն, անընդհատական գործընթաց և ոչ թե պայքարենք միայն այն ժամանակ, երբ այլևս տարբերակ չկա: Ինչպես մարզիկը չի կարող մի օր մարզվել, մի շաբաթ չմարզվել՝ մտածելով, որ երեկ շատ է մարզվել, և այդ ամենօրյա մարզանքի շնորհիվ է, որ նա հաղթում է, այնպես էլ մեր պայքարը պետք է լինի ամենօրյա ու ամենժամյա:

Հայ Եկեղեցին էլ է տալիս պայքարի լավագույն օրինակը. իր միասնականությամբ ավելի քան 1700 տարի կարողացել է գոյել ու գործել նույն կերպարի մեջ: Եկեղեցուց օրինակ պետք է վերցնենք որպես ազգ. Եկեղեցին արժեք է: Որքան գեղեցկություն կա այն երևույթի մեջ, երբ դու աղոթք ես անում, շարական ես երգում եկեղեցուց ներս՝ գիտենալով, որ այդ նույն աղոթքը, շարականը, ծեսը դարերով կատարել են քո հայրերը, և հիմա քո հերթն է, փոխանցել են քեզ՝ որպես ժառանգորդի: Եվ դու հաղորդակից ես լինում քո անցյալին, պատմությանը, ինքնությանը, և այդ ապրումակցումն այլևս իրական է, զգալի, ընկալելի...

— Ակնկալո՞ւմ եք համընդհանուր դարձի ճանապարհ... Արցախի վերագտնումը կկայանա՞ արդյոք...

— Հիմա շատ է արծարծվում՝ Արցախի էջն այլևս փակված է կամ բաց է. դա ժամանակն է որոշում, ինչպես որ կար ժամանակ՝ մենք Արցախում, մեր եկեղեցիներում չէինք աղոթում, փակ էին այդ եկեղեցիները մեզ համար, բայց եղավ նաև ժամանակը, որ մենք նորից աղոթեցինք մեր եկեղեցիներում: Հետևաբար՝ ամեն ինչ դառնում է ի շրջանս յուր, և ինչպես Աստվածաշնչում է ասված, կա քարեր հավաքելու ժամանակ և քարեր նետելու ժամանակ, լռելու ժամանակ և խոսելու ժամանակ, սիրելու և ձեռքից բաց թողնելու ժամանակ: *Կուզենամ, որ մենք ճիշտ հասկանանք՝ որ ժամանակում ենք ապրում:* Երբ մենք այս ամենը հասկանանք, կհասկանանք, թե վաղն ինչ է լինելու, և այդ «ի շրջանս յուր»-ը իրականություն կդառնա... Եվ Արցախի դեպքում «կորուստ» բառը չեմ ուզում գործածել, պարզապես այս պահին մենք ֆիզիկապես բաժանված ենք: Ես ինձ չեմ համարում վերջին վանահայր: Դադիվանքը սպասում է և շատ վանահայրեր պետք է ունենա: Սա իմ համոզմունքն է՝ հույսով շաղախված:

— Շնորհակալ եմ, Հայր Սուրբ... Տա՛ Աստված, որ մոտ ապագայում Արևագալի ժամերգություն կատարենք Դադիվանքում. մենք՝ որպես ուխտավոր, Դուք՝ որպես վանահայր...

Զրույցը՝ Ն. Հովհաննիսյանի

ՈԳԵՂԵՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Պոեզիայի մարգարեությունը կամ հայրենիքի ճակատագրի քրմուհին

Հայաստանը՝ որպես պատմաշխարհ և հոգեաշխարհ, աշխարհաքաղաքական կոխան ու քրիստոնյա ճակատագիր, խռովք՝ ընդդեմ ժամանակի և ժամանակի երկփեղկված զոհ, ոգու փրկության վերջին կայան, ժամանակակից բանաստեղծ Թամար Հովհաննիսյանի պոեզիայում կերպավորվում է նոր հատկանիշներով ու նորովի ընկալումներով: Դա տարիքի հետ հասունացած և իմաստնացած սեր է, հեռուներից վերահիմաստավորված բարձրագույն արժեք, երկրներով անցած ու ներքին համեմատականներով աներկրորդություն վերարժևորված սրբություն: Դա սիրո ու ցավի թախծամրմունջ երգ է, հոգին հայրենիքում թողած ու մարմինը՝ որպես բեռ, աշխարհի մյուս ծայր տեղափոխած բանաստեղծ էակի «ի խորոց սրտի խոսքը» ընդ երկրի, որ բյուրեղանում ու որպես անծրար նամակներ՝ տարածվում է օվկիանոսից օվկիանոս՝ ցրելով բանաստեղծական հոգու ուղերձներն առ Հայաստան.

Երկիրն իմ ասք է չգրված՝
Ժայռերի ըմբոստ ճակատին...
Երկիրն իմ նուռ է ճեղքված,
Քմահաճ քիմքին ժամանակի,
Տեսիլք է՝ խռով երկնքից
Փրկության նավի հայտնություն...
Երկիրն իմ խաչ է՝ մյուռոնով օծյալ՝
Աշխարհի անհավատ ճակատին...

Բանաստեղծությունն ասես հեթանոսական ծիսակատարության ասք լինի, և քնարական հերոսուհին՝ որպես նորօրյա քրմուհի, փառաբանություն է վերառաքում վասն Հայաստանի՝ առ տիեզերքի չորս կողմեր:

Թամար Հովհաննիսյանի հայրենասիրության պոեզիան մարդ-հայրենիք միագոյության պոեզիա է, միագոյություն, որի երկփեղկում-տարանջատումը հանգեցնում է որոնումների՝ գլխապտույտ հարուցող շրջապտույտի, երբ ինքնախաղաղումը միայն վերամբողջացումն է. *«Ես քեզ որոնում եմ քեզանից դուրս, // Դու որոնում ես ուրվականն իմ....»* :

Ի տարբերություն հայ դասական հայրենասիրական պոեզիայի՝ Հովհաննիսյանի հայրենասիրական պոեզիայում քնարական հերոսուհին հիմնականում ոչ թե երկրորդ դեմքով երկխոսության մեջ է մտնում հայրենիքի հետ, այլ պատմում, զրուցում է նրա մասին, այլ կերպ ասած՝ հայրենիքը Հովհաննիսյանի պոեզիայում գերազանցապես երրորդ դեմք է, բանաստեղծուհին ոչ թե անմիջական զրուցակից է, այլ քնարական պատմիչ: Չկա անմիջական առարկայական կապը, աներևույթ է մարմինների էներգիայի ոգեշունչ ներթափանցումը, այդ կապը ոգեկան է՝ ժամանակային ու տարածական որոշակի խզվածքներով ու ճեղքերով, որոնք, սակայն, երբեք անջրպետ չեն դառնում: Կա մեղքի ու ինքնախարազանումի զգացումը, որ հայրենիքի պարպումը նաև իրենով է կայանում, որ ինքն էլ նրան թողլքած մի մասնիկն է: Առկա է նաև խոստովանության պահը ինքնալլկումով՝ երկիրն իրենով չլցնելու, երկիրը իր ներկայությամբ կենդանի չպահելու, գոյության խրամատը լքելու համար:

«Ընկերոջս» բանաստեղծության մեջ գունապատկերային նոր մանրամասներով է վերահաստատվում մարդ-հայրենիք միագոյության փիլիսոփայական խոհը: Հայրենիքը հյուլե առ հյուլե ներծծված է մարդու հողեղեն էության բջիջների մեջ, մեկի գոյավիճակը պայմանավորում է մյուսինը, մեկի տարանջատումը մյուսի կիսատությունն է: Անհայրենիք գոյությունը մարմինը դարձնում է սոսկ տարա, որի հոգին իրենից դուրս խարխափում, անիմաստ չափչփում է աշխարհի փողոցներում: Ու գոյության վերահիմաստավորումը վերամիավորումն է հայրենիքի ու մարդու, ինչպես կտրված ու չորացող ծառի վերընձյուղումը արմատներին հանգուցվելուց հետո.

Ես գիտեմ հիմա, թե ինչու
Դու չես կարող փակել դուռն ու հեռանալ
Այդ ցավատանջ, ցամաք, ծերացած հողից:
Ամեն-ամեն բան արդեն պարզ է ինձ.
Հողն այդ ապրում է բջիջներիդ մեջ....

Անընդհատ հոգևոր դարձ դեպի ծննդավայր, անընդհատական ներքին մի հայացք՝ ուղղված հայրենիքին ու անցյալին, և դա այնքան ժամանակ, մինչև կայանա վերամբողջացումը: Ինչքան էլ մարմինը «քարշ գա» մեծ աշխարհի պողոտաներում, այնուամենայնիվ, հոգին կառչած է մնում հին կայանատեղին՝ ծննդավայրին.

Երկիրն իմ, որ թողեցի թիկունքում,
Կանչում է, ձայնում է ինձ երազներիս մեջ....

Վերհուշն իր մեջ ներառում է ժամանակային ինքնատիրապետումը կորցրած կարոտյալ հոգուն, ու կյանքի ճանապարհի կծիկը՝ ձեռքից բաց թողնված, սահում է տունդարձի հետքերով: Իսկ ծննդավայրը միայն հայրենական հողը չէ, այնտեղ ծանոթ ու թանկ հուշերն են, յուրայինները, նախնիների հրաշապատում ասքերը՝ երեկոները սեղանի շուրջ համախումբ պարպվող տաքացնող շշերի շուրջ: Արևմուտքի գեղարվեստական մտածողության շրջանակներում ի հայտ են գալիս հայրենական տան պատկերները՝ ամբողջական ու կիսադեմ. *«Կավե կճուճներ՝ պռոշը կոտրած, // Ու կորամեջք ծերեր ցնցոտիապատ», «Արևախանձ հնձվորներ, կտուրներ կարկատված»:*

Հովհաննիսյանի պոեզիայում, մարդու և հայրենիքի ոգեղեն ու օրգանական կապի, հոգևոր պատմության մեջ տեսլացող Հայաստանի պատմահոգեբանական պատկերներին զուգահեռ, տիրականորեն առաջ են մղվում նաև նրա ներկա օրը, սպառնալիքներով ծանրացող գոյաբանական ընթացքը, զինաթափությունը լինելության մաքառումներում.

Հայրենիքս ձեռքից բաց թողնված հին գինու շիշ է,
Ու ես աչքերս փակ սոսկում եմ
Գահավիժումի մոտալուտ պատկերից իր....

Այս և համանման այլ բանաստեղծություններում՝ գրված դեռ 2013–2018 թթ., բանաստեղծուհին դառնում է հայրենիքի ճակատագրի քրմուհի, ոգեղեն աչքերով պատկերագրում լինելիքը, ճակատագրով ու բախտով նախասահմանվածը:

Թ. Հովհաննիսյանի Հայաստանի պոեզիան և՛ մարգարեություն է, և՛ ոգեղեն հեռազգայություն, և՛ բանաստեղծի ու հայրենիքի օրգանական ամուր կապվածություն: Դա մերթ սիրուհու և հեռավոր սիրեցյալի կարոտալար է, մերթ՝ երկվորյակային կապվածություն, մերթ՝ մոր ու զավակի կամ զավակի ու մոր պորտալարային շաղկապվածություն: Հայաստանի գալիքի տեսիլային պատկերները Հովհաննիսյանի պոեզիայում ասես զավակին սպառնացող մահվան մղձավանջից ցնցված մոր կեսգիշերային երազներ լինեն՝ ասքային եղանակի փոխակերպված: Ահավասիկ մի պատկեր ևս, որ Հայաստանի ներկա իրավիճակի բնօրինակային տեսիլ է.

Հայրենիքս վեր նետված մանկան պես
Խաղացվում է օդում,
Ու որսացող ապահովության ձեռքերն ամուր չեն
Ետ գրկելու համար....

Դարակազմիկ տագնապը հայրենի երկրի ապագայի հանդեպ գրեթե միշտ այս կամ այն չափով առկա է Թ. Հովհաննիսյանի պատմահայրենասիրական պոեզիայում: Բանաստեղծական տողերում տրոփում, թպրտում է զգայուն մի սիրտ՝ մտավախություններով ծանրաբեռ ճնշման ներքո: Ներքին լարվածությունն ու կանացի դողը հայրենի երկրի բախտի հանդեպ մշտապես փոխանցվում են իրար՝ փոխադարձաբար դառնալով առանցքային տարր.

Ես մտավախություն ունեմ,
Որ աշխարհի հիշողությունը
Արձանագրվում է առանց իմ տեսակի
Ներառման:

Բանաստեղծուհու աշխարհիկ շարականներն այսպես հայտածում ու մորմոքում են Հայաստանի ճակատագրի կանխասացությունը՝ դառնալով Հայաստանի շուրջ և ներհայաստանյան քաղաքական արդի իրադարձությունների նախերգանքներ ու պատկերավոր նախօրինակներ: Այդտեղ և՛ հայրենիքի տերեր ինքնահռչակված սին ու անարժան բախտախնդիրներն են, որոնք ժողովրդի անգիտակից թողտվությամբ շարունակում են անխնա վատնել երկիրը ու իշխել, և՛ արտաքին աշխարհաքաղաքականության անհոգի ու դիմակավոր տերերը, որոնց համար Հայաստանը մանրադրամ է մեծ խաղընթացներում: Գլուխգործոցային արժեք ունեցող ստեղծագործություն է «Մաշված աղոթք» բանաստեղծությունը՝ խոհափիլիսոփայության և արվեստի պատկերավորության առումով, որի ազդեցությունը եռապատկվում է մարգարեական արժանիքով:

Աղոթքը մաշվել է երկար ճանապարհներից, ինչպես ուխտագնաց հավատացյալների բոբիկ ոտքերն են մաշվում Երուսաղեմ տանող հեռաձիգ ուղիներից: Աղոթքի ճանապարհի երկարությունը փրկության որոնումների ապարդյունությունն է, գոյության բարձունքի անմատչելիությունը, խոսքի զորության կորուստը: Աշխարհաքաղաքական խաղացողների անհոգի ու անմիտ սեղանների վրա Հայաստանը շրջանառվում է որպես մանրադրամ, ու նա, թյուրիմացաբար թե անճարակորեն, իր լինելության վերջին հույսը պահ է տվել նրանց, ովքեր կարող են իրեն անփութորեն, ստորակետի պես կցել սխալ տեղի, որոնց համար իր ներկայությունը չնշմարվող միջակետ է կամ շվայտորեն ծախսվող մանրադրամ.

Ես վախենում եմ, հայրենիք իմ,
Երբ քեզ վաճառում կամ հեշտ օտարում են մաս առ մաս,
Ու դու մատաղվում ես՝
Վերջին գոյության հույսը քո
Մանրադրամ դարձած, պատառ առ պատառ,
Տրվում նրանց, ում ափսեներում հսկա
Ներկայությունդ չի էլ երևում,
Կամ էլ կցվում է տեղի ինչ-որ անկապ՝
Սխալ օգտագործվող շաղկապումի նման,
Որ հեշտորեն կարող է փոխվել
Ստորակետի անփույթ
Կամ տողատները զատող միջակետի անկապ....

Սա Հայաստանին նվիրված հայ պոեզիայի արտաժայթքումներից է՝ զգացմունքի ու խոհի բարձրակետային համաձուլվածք, Հայաստանի ապագայի բնօրինակային նախապատկեր: Բանաստեղծուհու խորազգա ու հեռաթափանց հայացքը պարզ տեսնում է աշխարհաքաղաքական գործընթացների ուղղվածությունն ու ողբերգական հետևանքները Հայաստանի համար.

Ես վախենում եմ, հայրենիք իմ,
Երբ լույսի պես չքացող դու մարմրում ես տեղ առ տեղ,
Շնչառությունը կորցնող,
Հանգչող ծնողի ժպիտի նման՝
Գիտակցության վերջին առկայծումները
Մեծահոգաբար սգացող որդիներին թողած....

Բանաստեղծուհու աղոթքը՝ կասեցնելու հայրենիք-զավակի խաչելության ողբերգությունը, անզոր և իզուր է այլևս. Հայաստանն արդեն «խաչված հրաշք» է, իսկ ժողովուրդը՝ «տիեզերական բեռ»: Մաս առ մաս վաճառված ու օտարված Հայաստան, անհայրենիք ու թափառական ժողովուրդ, հուշ դարձած հայրենական տուն.

Ես վախենում եմ, հայրենիք իմ,
Հրաշք իմ խաչված,
Աղոթք իմ մաշված,
Որ առանց քեզ տիեզերական բեռ ենք դառնում ամենքս....

Հայաստանի ներկա պահի ողբերգական պատկերն է սա՝ տեսլացած պոեզիայով տարիներ առաջ: Հայաստանի զինաթափանպաշտպանությունը, անգլուխ-անղեկությունը, կրավորական-պարտվողական գոյավիճակը բանաստեղծության մեջ առերեսվում են աշխարհի՝ «հեգնանքը խնայած» անտարբերությանը.

Աշխարհի անցուդարձը խաղ, խորամանկ ու խարդախ,
Դու՝ անզրահ ասպետ, ձին՝ անհեծյալ, անսանձ,
Որն իր վերջին շունչն է ճոճում դաշույնի տեղ,
Ու աշխարհն անտարբեր, հեգնանքը խնայած,
Շրջանցելիս անգամ չի նկատում էլ քեզ....

Կորսվող Հայաստան-մարմնից հետո լինելության վերջին հույս է դառնում Հայաստան-հոգու փրկությունը: Բանաստեղծուհու խոսքը հնչում է որպես որդեկորույս մի նոր Մարիամի աղերս-հրահանգ, նախասահմանությանը դիմադարձող պոետական հրաշափառություն կամ քրիստոսաբար պայծառակերպություն.

Արդ, դաշույնի տեղակ լեզուդ հազարաշեղջ,
Փայլատակիր, ճչա՛ կոչ ու գոչով հպարտ,
Հոգի՛դ փրկիր, երկի՛ր, հոգիդ հազարամյա....

Հայաստանը՝ որպես հարափոփոխ ու բազմադիմակ աշխարհի քաղաքական հանդեսներում քայլող անդիմակ մաքրություն ու հազվագյուտ թանկություն, որպես երկրային կյանքի վրա տարածվող երկնային մանանա՝ գիշատիչների բաց երախին հանդիման, որպես որբ մանուկ ու մտահոգ ծնող, որպես կորուսյալ մարմինը որոնող անմարմին հոգի: Հակադրությունների տաճարում աղոթասացող բանաստեղծուհին նվիրյալ զինվորի պես պատրաստ է զոհաբերել իրեն, միայն թե կայանա հայրենի երկրի փրկությունը.

Հայրենիք իմ,
Մշուշոտ տեսլախաբություն իմ հեռու,
Սրտի տրոփ՝ իմ կրծքի տակ,
Ես քո մատաղն եմ չմորթված,
Դու երազանքն իմ բաղձալի՝
Այս երկդեմ աշխարհի այս ու այն կողմերում
Հակինթի պես արգելված....

Խոհապատկերային բացառիկ ինքնարտահայտում է նաև «Անմիտ խզբզուք» բանաստեղծությունը: Անմիտ խզբզուք, այսինքն՝ ապարդյուն ճիգ, անարդյունք լարում, ընթացք չբեկող միտք, նոր սկիզբ չարարող բան: Բանաստեղծությունը Հայաստանի պատմության գեղարվեստական խտացում է, որի յուրաքանչյուր տուն ժողովրդի պատմության մի փուլ է՝ բազմաբևեռ տարողությամբ ու բազմասևեռ հայացքով: Բանաստեղծուհու սիրտը աշխարհի անցուդարձի մայրուղի է, աշխարհաքաղաքական գործընթացների կոխան, հայրենիքի գլխին առկախ տագնապների մշտամնա կայան.

Ինձ իմ բախտից զատ, գուցե և ավելի,
Իմ հայրենական տան բախտն է տագնապեցնում,
Խախտվել են կարծես սյուները երբեմնի
Ու անտեր թողել մի ողջ ժողովուրդ....

Արտաքին սպառնալիքներին դեմ հանդիման ուրվապատկերվում են ներքին մարտահրավերները: Գյուղ առ գյուղ, քաղաք առ քաղաք նոսրացող ու դատարկվող հայրենիք, տարագնացող ժողովուրդ, որ հետ չի նայելու.

Սրբատեղի է լինելու չայցելված
Երկիրն իմ, թե եղածը արտահորդի այդպես,
Ես չգիտեմ, թե ում են տիրակալելու
Արքաներն ինքնահռչակ ռամիկների պես:

Սա մեր օրերի անմխիթար պատկերն է, սթափության վերջին մի ճիչ՝ գրված 2018-ին՝ ժողովրդի պատմության բեկումնային օրերին:

Թամար Հովհաննիսյանի պոեզիան Հայաստանի պատմահոգեբանության՝ ներկա ժամանակի գիրքն է՝ օծված աստվածային առանձնահատուկ շնորհներով: Այն նաև Հայաստանի գալիքի մարգարեության գիրքն է, հեթանոսական տաճարում ծնրադրած քրմուհու՝ կրակի քուրայի մեջ անդրադարձվող հայրենիքի ճակատագրի վերծանման տագնապալի ողբերգը՝ ուղղված ժամանակներին:

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
բ. գ. թ., դոցենտ

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դմիտրի Լիխաչով. ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ 2022, թիվ 19 — 2023, թիվ 10, 15—17, 19

Նամակ քառասունմեկերորդ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Մենք հոգ ենք տանում մեր և ուրիշների առողջության մասին, հետևում ենք, որ ճիշտ սնվենք, որ օդն ու ջուրը մնան մաքուր, չաղտոտված: Շրջակա միջավայրի աղտոտվածությունը մարդուն հիվանդացնում է, սպառնում նրա կյանքին, սպառնում ողջ մարդկության վախճանով: Բոլորին հայտնի են հսկայական այն ջանքերը, որոնք գործադրում են մեր պետությունը, առանձին երկրները, գիտնականները, հասարակական գործիչները, որպեսզի աղտոտումից փրկեն օդը, ջրամբարները, ծովերը, գետերը, անտառները, որպեսզի պահպանեն մեր մոլորակի կենդանական աշխարհը, չվող թռչունների իջևանատեղիները, ծովային կենդանիների ծվարատեղերը: Մարդկությունը միլիարդներ ու միլիարդներ է ծախսում ոչ միայն այն բանի համար, որ չխեղդվի, չմեռնի, այլև որ պահպանի մեզ շրջապատող այն բնությունը, որը մարդուն գեղագիտական ու բարոյական հանգստի հնարավորություն է ընձեռում: Շրջապատող բնության բուժիչ ուժը լավ հայտնի է:

Գիտությունը, որն զբաղվում է շրջակա բնության պահպանությամբ և վերականգնմամբ, կոչվում է բնապահպանություն: Եվ բնապահպանություն արդեն իսկ սկսում են դասավանդել համալսարաններում:

Բայց բնապահպանությունը չպետք է սահմանափակվի միայն մեզ շրջապատող կենսաբանական միջավայրի պահպանման խնդիրներով: Մարդն ապրում է ոչ միայն բնական միջավայրում, այլև իր նախնիների և հենց իր ստեղծած մշակութային միջավայրում: Մշակութային միջավայրի պահպանումը ոչ պակաս կարևոր խնդիր է, քան բնական միջավայրի պահպանությունը: Եթե բնությունը մարդուն անհրաժեշտ է նրա կենսաբանական գոյության համար, ապա մշակութային միջավայրը ոչ պակաս անհրաժեշտ է նրա հոգևոր, բարոյական կյանքի, նրա «հոգևոր հաստատունության», հարազատ վայրերին կապվածության, նախնիների պատվիրանների, նրա բարոյական ինքնակարգապահության և հասարակայնության համար: Այնինչ բարոյական բնապահպանության հարցը ոչ միայն չի ուսումնասիրվում, այլև բարձրացված չէ: Ուսումնասիրվում են մշակույթի առանձին տեսակներ և մշակութային անցյալի մնացորդներ, հուշարձանների վերականգնման և դրանց պահպանման հարցեր, սակայն իր ամբողջության մեջ չեն ուսումնասիրվում մշակութային ողջ միջավայրի՝ մարդու վրա ունեցած բարոյական նշանակությունն ու ազդեցությունը՝ նրա ներգործող ուժը:

Բայց չէ՞ որ շրջակա մշակութային միջավայրի՝ մարդու վրա ունեցած դաստիարակչական ազդեցության փաստը նվազագույն իսկ կասկածի ենթակա չէ:

Օրինակների հետևից հեռու գնալ պետք չէ: Պատերազմից հետո Լենինգրադ վերադարձավ նրա նախապատերազմյան շրջանի բնակչության ոչ ավելի, քան 20 տոկոսը, և այդուհանդերձ՝ Լենինգրադ նոր եկածներն արագ ձեռք բերեցին «լենինգրադյան» վարքի այն հստակ գծերը, որոնցով իրավամբ հպարտանում են լենինգրադցիները: Մարդը, իր համար աննկատ, դաստիարակվում է իրեն շրջապատող մշակութային միջավայրում: Նրան դաստիարակում է պատմությունը՝ անցյալը: Անցյալը նրա համար պատուհան է բացում դեպի աշխարհ, և ոչ միայն պատուհան, այլև դռներ, նույնիսկ դարպասներ՝ հաղթական դարպասներ: Ապրել այնտեղ, որտեղ ապրել են ռուսական մեծ գրականության բանաստեղծներն ու արձակագիրները, ապրել այնտեղ, որտեղ ապրել են մեծ քննադատներն ու փիլիսոփաները, ամեն օր ներծծել տպավորությունները, որոնք այսպես թե այնպես արտացոլվել են ռուս գրականության նշանավոր ստեղծագործություններում, այցելել տուն-թանգարաններ նշանակում է աստիճանաբար հոգով հարստանալ:

Փողոցները, հրապարակները, ջրանցքները, առանձին տները, զբոսայգիները հիշեցնում են, հիշեցնում են, հիշեցնում... Անցյալի տպավորությունները անբռնազբոս և վեհերոտ մտնում են մարդու հոգևոր աշխարհ, և մարդը բաց հոգով մուտք է գործում անցյալ: Նա սովորում է հարգել իր նախնիներին և մտապահում է այն, ինչն իր հերթին անհրաժեշտ կլինի իր հետնորդներին: Անցյալն ու ապագան մարդու համար դառնում են յուրային: Նա սկսում է պատասխանատվություն զգալ, բարոյական պատասխանատվություն անցյալի և միաժամանակ ապագայի մարդկանց նկատմամբ, որոնց համար անցյալը պակաս կարևոր կլինի, քան մեզ համար, իսկ հնարավոր է՝ մշակույթի ընդհանուր վերելքով և հոգևոր պահանջների բազմապատկմամբ, նույնիսկ ավելի կարևոր: Անցյալի նկատմամբ հոգատարությունը միաժամանակ հոգատարություն է նաև ապագայի նկատմամբ...

Սեփական ընտանիքը, մանկության տպավորությունները, տունը, դպրոցը, հայրենի գյուղը, քաղաքը, երկիրը, սեփական մշակույթն ու լեզուն, ողջ երկրագունդը սիրելն անհրաժեշտ է, միանգամայն անհրաժեշտ է մարդու բարոյական հաստատունության համար: Մարդը տափաստանային դաշտագլոր չէ, որին աշնանային քամին քշում է տափաստանով մեկ:

Եթե մարդը չի սիրում թեկուզև հազվադեպ դիտել իր ծնողների հին լուսանկարները, չի արժևորում նրանց մասին հուշերը, որոնք մնացել են նրանց մշակած այգում, նրանց պատկանած իրերում, նշանակում է՝ չի սիրում նրանց: Եթե մարդը չի սիրում հին տները, հին փողոցները, թեկուզ նույնիսկ լինեն վատը, նշանակում է՝ նա սեր չունի իր քաղաքի նկատմամբ: Եթե մարդն անտարբեր է իր երկրի պատմական հուշարձանների հանդեպ, նշանակում է՝ նա անտարբեր է իր երկրի նկատմամբ:

Այսպիսով՝ բնապահպանությունն ունի երկու բաժին. կենսաբանական բնապահպանություն և մշակութային կամ բարոյական բնապահպանություն: Առաջինի օրենքների չպահպանումը կարող է մարդուն կենսաբանորեն սպանել, երկրորդի չպահպանումը կարող է մարդուն սպանել բարոյապես: Եվ նրանց մեջ բնավ անդունդ չկա: Որտե՞ղ է բնության և մշակույթի միջև ճշգրիտ սահմանը: Մի՞թե միջինռուսական բնության մեջ մարդկային աշխատանքի ներկայություն չկա:

Ոչ թե միայն շենք է պետք մարդուն, այլև շենք՝ որոշակի վայրում: Ուստի անհրաժեշտ է դրանք՝ հուշարձանն ու բնապատկերը, պահպանել միասին, այլ ոչ թե առանձին: Շինությունը պահպանել բնապատկերի մեջ, որպեսզի երկուսն էլ պահվեն հոգու մեջ: Մարդը բարոյապես նստակյաց է, եթե անգամ քոչվոր է եղել. չէ՞ որ նա քոչվոր կյանք է վարել որոշակի վայրերում: Քոչվորի համար նույնպես գոյություն ուներ «նստակեցություն»՝ իր լայնարձակ քոչավայրերում: Միայն բարոյազուրկ մարդը՝ ոչ նստակյացը, կարող է հենց սպանել ուրիշների նստակեցությունը:

Բնության պահպանության և մշակույթի պահպանության միջև վիթխարի տարբերություն կա: Այդ տարբերությունը ոչ միայն վիթխարի է, այլև սկզբունքորեն էական:

Որոշակի սահմաններում բնության մեջ եղած կորուստները վերականգնելի են: Կարելի է մաքրել աղտոտված գետերն ու ծովերը. կարելի է վերականգնել անտառները, կենդանիների գլխաքանակը և այլն: Իհարկե, եթե չի հատվել որոշակի սահմանագիծը, եթե ամբողջությամբ չի ոչնչացվել կենդանիների այս կամ այն ցեղատեսակը, եթե չի մահացել բույսերի այս կամ այն տեսակը: Չէ՞ որ հնարավոր եղավ անտառացուլերին վերականգնել թե Կովկասում և թե Բելովեժյան թավուտում, անգամ նրանց բնակեցնել Բեսկիդներում, այսինքն՝ նույնիսկ այնտեղ, որտեղ նրանք նախկինում չեն եղել: Ընդ որում՝ բնությունն ինքն է օգնում մարդուն, որովհետև նա «կենդանի» է: Նա ունի ինքնամաքրվելու, մարդու խախտած հավասարակշռությունը վերականգնելու հատկություն: Նա բուժում է դրսից իրեն հասցված վերքերը՝ հրդեհներից կամ հատումներից, թունավոր փոշիներից, գազերից, կոյուղաջրերից...

Բոլորովին այլ է մշակութային հուշարձանների հարցը: Դրանց կորուստներն անվերականգնելի են, որովհետև մշակութային հուշարձանները միշտ անհատական են, միշտ կապված են անցյալի որոշակի դարաշրջանի, որոշակի վարպետների հետ: Ամեն մի հուշարձան ավերվում է ընդմիշտ, եղծվում է ընդմիշտ, վնասվում ընդմիշտ: Եվ նա միանգամայն անպաշտպան է, այն չի կարող ինքն իրեն վերականգնել:

Կարելի է ստեղծել ավերված շենքերի նմանակերտները, օրինակ, ինչպես դա եղավ Վարշավայում, սակայն անհնար է շենքը վերականգնել որպես «վավերագիր», որպես իր ստեղծման դարաշրջանի «վկա»: Յուրաքանչյուր վերակառուցված հին հուշարձան զրկված կլինի վավերագրայնությունից: Այն կլինի միայն «տեսանելիություն»: Մահացածներից մնում են միայն դիմանկարներ: Սակայն դիմանկարները չեն խոսում, դրանք չեն ապրում: Որոշակի հանգամանքներում «նմանվածքները» իմաստ ունեն, և ժամանակի ընթացքում դրանք դառնում են դարաշրջանի «վավերագրեր», այն դարաշրջանի, որում ստեղծվել են: Վարշավայի Հին քաղաքը կամ Նովի Շվյատ (Նոր աշխարհ) փողոցը ընդմիշտ կմնան հետպատերազմյան տարիների լեհ ժողովրդի հայրենասիրության վավերագրերը:

Մշակութային հուշարձանների «պաշարը», մշակութային միջավայրի «պաշարն» աշխարհում չափազանց սահմանափակ է, և այն սպառվում է հարաճուն արագությամբ: Տեխնիկան, որն ինքն իսկ մշակույթի արդյունք է, երբեմն ավելի շատ ծառայում է մշակույթը սպանելուն, քան մշակույթի կյանքի երկարացմանը: Անխոհեմ, անգետ մարդկանց վարած բուլդոզերները, ամբարձիչները, շինարարական կռունկները կարող են վնասել այն, ինչ դեռևս չի հայտնաբերվել հողի տակ, և այն, ինչ հողի վրա է՝ արդեն ծառայելով մարդկանց: Նույնիսկ հենց իրենք՝ վերականգնողները, երբեմն, աշխատելով ըստ իրենց սեփական, ոչ բավարար ստուգված տեսությունների կամ գեղեցկության մասին մեր ժամանակակից պատկերացումների, ավելի շատ դառնում են անցյալի հուշարձաններն ավերողներ, քան դրանց պահապաններ: Հուշարձաններ են ոչնչացնում նաև քաղաքաշինարարները, հատկապես եթե չունեն հստակ և ամբողջական պատմական գիտելիքներ:

Երկիրը նեղ է դառնում մշակութային հուշարձանների համար ոչ թե այն պատճառով, որ հողը քիչ է, այլ այն պատճառով, որ շինարարներին գրավում են հին վայրերը՝ բնակեցված և այդ իսկ պատճառով քաղաքաշինարարներին հատկապես գեղեցիկ և գայթակղիչ թվացող:

Քաղաքաշինարարներին, առավել քան որևէ մեկին, անհրաժեշտ են գիտելիքներ մշակույթի պահպանության ոլորտում: Ուստի գավառագիտությունը պետք է զարգանա, այն պետք է տարածվի ու դասավանդվի, որպեսզի դրա հիման վրա լուծվեն տեղական բնապահպանական խնդիրները: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությանը հաջորդած առաջին տարիներին գավառագիտությունը բուռն ծաղկում ապրեց, բայց հետագայում թուլացավ: Գավառագիտական բազմաթիվ թանգարաններ փակվեցին: Սակայն այժմ առանձնակի ուժգնությամբ է բորբոքվել հետաքրքրությունը գավառագիտության նկատմամբ: Գավառագիտությունը սեր է դաստիարակում հայրենի հողի նկատմամբ և տալիս է այն գիտելիքները, առանց որոնց հնարավոր չէ մշակութային հուշարձանների պահպանումը տվյալ վայրերում:

Անցյալի նկատմամբ քամահրանքի ողջ պատասխանատվությունը չպետք է գցենք ուրիշների վրա կամ պարզապես հուսանք, որ անցյալի մշակույթի պահպանմամբ զբաղվում են պետական և հասարակական հատուկ կազմակերպությունները, և «դա նրանց գործն է», ոչ թե մերը: Մենք ինքներս պետք է լինենք կիրթ, լուսամիտ, դաստիարակված, հասկանանք գեղեցկությունը և լինենք բարի, այո՛, հենց բարի և երախտապարտ մեր նախնիներին, որոնք մեզ և մեր սերունդների համար ստեղծել են այն ամբողջ գեղեցկությունը, որը ոչ այլ ոք, հենց մենք ինքներս երբեմն անկարող ենք ճանաչել, ընդունել մեր բարոյական աշխարհում, պահպանել և ջերմեռանդ պաշտպանել:

Յուրաքանչյուր մարդ պարտավոր է իմանալ, թե ինչ գեղեցկությամբ և ինչպիսի բարոյական արժեքներով է շրջապատված: Նա չպետք է ինքնավստահ և լկտի լինի անցյալի մշակույթն առանց խտրության և «դատաստանի» մերժելու հարցում: Ամեն ոք պարտավոր է իր հնարավորությունների սահմաններում մասնակցել մշակույթի պահպանմանը:

Ամեն ինչի համար պատասխանատու ենք մենք ձեզ հետ միասին, այլ ոչ թե ինչ-որ ուրիշը, և մեր ուժերից է կախված մեր անցյալի նկատմամբ անտարբեր չլինելը: Այն մերն է՝ մեր ընդհանուր տիրապետության ներքո:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Տ. Անդրեաս վրդ. ԵՋԵԿՅԱՆԻ

Հայացք դարի բարձունքից

Սկիզբը՝ թիվ 11—12, 15, 19

Իր արգասավոր կյանքի 95-րդ տարում Մարիամ Ասլամազյանը Մոսկվայում լույս ընծայեց «Կյանքիս դավթարը» ինքնակենսագրական հուշապատումների գիրքը: «-Երբ վրձինն իմ ձեռքում այլևս չի նկարում,— հուշագրքի շարադրանքն այսպես է սկսում իր բազմաբեղուն կյանքի 10-րդ տասնամյակը թևակոխած ճանաչված արվեստագետը,— ուրեմն գրիչ վերցնելու ժամանակն է, քանզի ձեռքերս պարապ մնալ չեն կարող»:

Հեղինակը գրքում հետադարձ հայացք է ձգում իր բազմահարուստ, բովանդակ կյանքի ուղղի՝ գեղագետ մարդուն ինքնահատուկ աշխարհտեսությամբ արժևորելով անցյալը՝ դեմքերը, դեպքերը, իրադարձությունները:

«Դավթարն» այսօր էլ ընթերցվում է մեծագույն հետաքրքրությամբ, քանզի հուշապատումների գիրքը բովանդակում է Ի դարի պատմական-ճանաչողական, հոգևոր-մշակութային շատ ուշագրավ նյութեր (օրինակ՝ այն պատումը, երբ դեռատի աղջնակն ականատես է եղել հայրենի քաղաքում 1918 և 1920—1921 թթ. թուրք զավթիչների հրեշավոր արարքներին):

Առանձնապես հարուստ ու գունեղ է հեղինակի մեկդարյա կյանքի ճանապարհին հանդիպած անվանի մարդկանց «պատկերասրահը»՝ Նիկողայոս Մառ, Նադեժդա Կրուպսկայա, Ակսել Բակունց, Ավետիք Իսահակյան, Մարտիրոս Սարյան, Սերգեյ Մերկուրով, Վերա Մուխինա, Արամ Խաչատրյան, Վազգեն Վեհափառ, Ինդիրա Գանդի.... Ճշմարիտ է՝ թեև նրանք իրենց հարուստ կենսագրականներով հանրաճանաչ երևելիներ են, սակայն «Դավթար»-ի ընթերցողը, հեղինակի ընկալմամբ ու մեկնությամբ, նշանավոր այդ մարդկանց ճանաչում է նորովի:

Ապագա գեղանկարչուհու ճակատագրում, օրինակ, անգնահատելի է Վ. Լենինի զինակցի և կնոջ՝ Ն. Կրուպսկայայի օգնությունը: 1928 թ. Մոսկվայի «ՎԽՈՒՏԵԻՆ»-ից հեռացված «օտար տարրի» դուստրը՝ երիտասարդ ուսանողուհին, դիմում է Լուսժողկոմատում պաշտոնավարող Ն. Կրուպսկայային: Մ. Ասլամազյանի երախտագիտական բնութագրմամբ «Նադեժդա Կոնստանտինովնան բարեսիրտ էր և Մարդ մեծատառով», շուտով հրապարակում է հոդված, որ ծնողների համար զավակները պատասխանատու չեն, որով մեկընդմիշտ փրկվում են և՛ Մ. Ասլամազյանը, և՛ նրա բախտակից բազմաթիվ ուսանողներ:

Առանց հուզմունքի անհնարին է ընթերցել Ակսել Բակունցի մասին հուշապատումը, նուրբ գրչի և անաղարտ հոգու տեր գրողի ցավալի կորուստը:

Գեղանկարչուհու համար հոգու տոն են եղել Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի հետ հանդիպումները, քանզի Վեհափառը «խելացի էր, իմաստուն, հեռատես, բարեկիրթ, կառուցող-արարող, արվեստի բարձրաճաշակ գնահատող՝ անմնացորդ սիրահարված Հայաստանին ու հայ ժողովրդին»:

Բարեգութ Աստծու շնորհով օժտված գեղանկարչուհին, որը հիանալի գիտի գույնի գեղագիտական-փիլիսոփայական արժեքը, կերպարվեստն ընդհանրապես, ինքնակենսագրական այս գրքով, գեղարվեստական գունեղ խոսքի ուժով հավաստում է նաև գրել-պատմելու իր ակնհայտ ձիրքը: Գիրքն ամբողջությամբ ողողված է լույսով ու ջերմությամբ, որի մաքրամաքուր ակունքն արվեստի դժվարվերելք բարձունքները նվաճած բարեկիրթ և նրբաճաշակ, աշխարհաճանաչ և իմաստուն, վեհ ու ազնվական մարդկային հազվադեպ էությունն է՝ ինքը Մարիամ Ասլամազյանը:

Մ. Ասլամազյանի «Կյանքիս դավթարը» ռուսերեն հրատարակված գրքից, իմ թարգմանությամբ, ստորև ներկայացնում եմ «Թուրքերն Ալեքսանդրապոլում. 1918, 1920—1921 թթ.» պատումը: Այստեղ հեղինակը սրտի կսկիծով է վերհիշում հայրենի քաղաքը գրաված բարբարոս զավթիչների հրեշավոր, անմարդկային վայրագությունները, դեպքեր, որոնց ականատեսն է եղել նուրբ, զգայուն 12-ամյա աղջնակը:

Մեկ հավելում ևս. սույն հրապարակումը, կարծում եմ, ոչ միայն պատմական-ճանաչողական արժեք ունի, այլև այն սթափության ու զգոնության անուղղակի կոչ է նախևառաջ հայ ժողովրդի այն հատվածին, որը մեր անցյալի արյունոտ պատմության դասերից դեռևս ճիշտ հետևություններ չի արել և տակավին հավատում է թուրքի բարեփոխությանը:

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Մարիամ Ասլամազյան.
Թուրքերը Ալեքսանդրապոլում. 1918, 1920—1921 թթ.

Իմ հիշելով՝ թուրքերն Ալեքսանդրապոլում եղել են երկու անգամ: Առաջինը 1918 թվականին էր, երբ մենք ընտանյոք տեղափոխվեցինք Թիֆլիս: Երկրորդ անգամ 1920-ին էր, երբ քաղաքի վրա կրկին սև ամպեր կուտակվեցին: Թուրքերը Կարսը գրավելուց հետո անկասելիորեն շարունակում էին հարձակումը, իսկ մեր բանակն այնքան արագ էր նահանջում, որ ժողովուրդը չհասցրեց տարահանվել, հեռանալ:

Ուշ աշուն էր, ձյունախառն անձրև էր տեղում, ամենուրեք՝ ծնկահաս ցեխ: Փախստականները, գումակը և նահանջող բանակը իրար էին խառնվել: Սոված ու մրսած մարդիկ անիծելով ու արցունքներով աճապարում էին՝ իրենք էլ չիմանալով, թե ուր...

Հարևան գյուղերից եկած փախստականներով լիքն էր մեր տունը: Քաղաքի մատույցներում արկեր էին պայթում, այրվում էին պահեստները: Մարդիկ ջարդում-փշրում էին կողպեքները և կողոպտում խանութները: Փողոցներում դասալիքների դիակներ էին՝ վրանները փակցված «հայրենիքի դավաճաններ» մակագրությունը:

Հայրս դեռևս տուն չէր եկել ջրաղացից, իսկ սպասելն այլևս անհնարին էր: Հորեղբայրս մորաքրոջս ու ավագ քույրերիս հետ վճռեց հեռանալ քաղաքից, քանի որ չէր կարելի դեռատի աղջիկներին թողնել թուրքերին...

Հայրիկին ուշ գիշերով բերեցին տուն՝ քառասուն աստիճան ջերմելիս: Նրան բարեկամներն էին վերցրել կես ճանապարհից: Այսպիսի վիճակում մեր տարհանվելն այլևս հնարավոր չէր, և մենք մնացինք...

Ամբողջ գիշեր մարտեր էին ընթանում, և առատորեն անձրևում էր: Լուսադեմին ամեն ինչ նորից խաղաղվեց, և մեռելային անդորրում հեռուներից սկսեցին մեզ հասնել փողային նվագախմբի հնչյունները. թուրքական ազգային օրհներգն էր կատարվում: Շուտով երևացին նաև զորայուները: Արշավում էր թուրքական հեծելազորը, և այդ գազաններից յուրաքանչյուրը թամբերին մի-մի ցից էր ամրացրել, որոնց վրա խրված էին սպանված հայերի կտրված գլուխները... Ամենաահավոր ու նողկալի պատկերը մեծահասակ կնոջ գլուխն էր, որի երկար ճերմակ վարսերը ծածանվում էին քամուց: Հարբած ասկյարներն իրենց հաղթանակն էին տոնում: Դա մի հրեշավոր, սոսկալի տեսարան էր:

Ամուր փակվել էին բոլոր տների դռները: Սակայն, միևնույն է, թուրքերը խցկվում էին ամենքի տունն էլ, ջարդում, փշրում կամ այրում էին գոց դռները, աղջիկներ էին պահանջում և հափշտակում՝ ինչ տեսնեին: Սպանում էին ում ասես և որտեղ ասես:

Մարտ ամսին մայրիկիս մոտ կծկանքներ սկսվեցին: Նա միշտ տանն էր ծննդաբերում՝ երկարատև ու տանջագին: Ամբողջ գիշերվա խավարում տառապագին ցավեր քաշեց մայրիկը, և առավոտյան լույս աշխարհ բերեց Թամարային՝ իմ յոթերորդ քույրիկին: Ինձ ուղարկեցին մեզանից ոչ այնքան հեռու ապրող մորաքրոջը կանչելու: Փողոցի անկյունում երկար հյուսքերով փախչող մի աղջիկ տեսա, որին հետապնդում էր թուրք ասկյարը: Դժբախտը շնչակտուր նետվեց դեպի դարպաս, սակայն նրա երկայն հյուսքերից ամուր բռնեց թուրք ասկյարը և քարշ տվեց դեպի իրեն. աղջիկը ճչում էր, աղերսագին օգնություն կանչում, բայց ոչ ոք չհասավ... Նույն պահին հանկարծ ինչ-որ մեկը ինձ ուժով դռնակից ներս՝ անծանոթ տուն տարավ: Պարզվեց՝ մերոնցից էր, և նա ինձ ապահով տեղ թաքցրեց: Ես ընդամենը տասներկու տարեկան էի: Դրանից հետո ինձ այլևս ոչ մի տեղ չէին թողնում կամ ուղարկում, թեպետև ես դեռահաս, նիհարիկ և ոչ ուշագրավ աղջնակ էի:

Աստվածաշունչ՝ գիրք գրոց

ՅԻՍՈՒՍ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌԱՋ
(Մատթ. 27.1-2, 11-31, Մարկ. 15.1-20, Ղուկ. 23.1-5, 13-25)

....Պիղատոսը նրան ասաց. «Թէ որ այդպէս է, ուրեմն դու թագաւո՞ր ես»: Յիսուս նրան պատասխանեց. «Դու ես ասում, որ թագաւոր եմ, բայց ես դրա համար իսկ ծնուել եմ եւ դրա համար իսկ եկել եմ աշխարհ, որպէսզի ճշմարտութեան համար վկայեմ: Ամէն մարդ, որ ճշմարտութիւնից է, իմ ձայնը լսում է»: Պիղատոսը նրան ասաց. «Ի՞նչ է ճշմարտութիւնը»: Երբ այս ասաց, դարձեալ դուրս ելաւ, հրեաների մօտ, ու ասաց նրանց. «Ես նրա մէջ ոչ մի յանցանք չեմ գտնում: Բայց դուք սովորութիւն ունէք, որ զատկին ձեզ համար մի բանտարկեալ արձակեմ. արդ, ուզո՞ւմ էք, որ ձեզ համար արձակեմ հրեաների թագաւորին»: Բոլորը աղաղակեցին եւ ասացին՝ ո՛չ դրան, այլ՝ Բարաբբային: Եւ այն Բարաբբան աւազակ էր:

Այն ժամանակ Պիղատոսը հրամայեց Յիսուսին վերցնել եւ նրան գանակոծել: Իսկ զինուորները փշէ պսակ շինելով դրեցին նրա գլխին ու նրան ծիրանի զգեստ հագցրին: Եւ գալիս էին նրա մօտ ու ասում՝ ողջո՛յն, հրեաների՛ արքայ: Եւ նրան ապտակում էին.... Երբ քահանայապետներն ու պահակները նրան տեսան, աղաղակ բարձրացրին եւ ասացին. «Խա՛չը հանիր, խա՛չը հանիր դրան»: Պիղատոսը նրանց ասաց. «Դո՛ւք առէք նրան ձեր մէջ եւ ինքնե՛րդ խաչը հանեցէք, քանի որ ես դրա մէջ որեւէ յանցանք չեմ գտնում»: Հրեաները նրան պատասխանեցին. «Մենք օրէնք ունենք, եւ ըստ մեր օրէնքի պէտք է նա մեռնի, որովհետեւ իրեն Աստծու Որդի դարձրեց»: Երբ Պիղատոսը այս խօսքերը լսեց, աւելի եւս վախեցաւ: Դարձեալ, մի անգամ եւս մտաւ ապարանքը եւ Յիսուսին ասաց՝ որտեղի՞ց ես դու: Եւ Յիսուսն նրան պատասխան չտուեց: Պիղատոսը նրան ասաց. «Ինձ հետ չե՞ս խօսում, չգիտե՞ս, որ իշխանութիւն ունեմ քեզ խաչը հանելու. եւ իշխանութիւն ունեմ քեզ ազատ արձակելու»: Յիսուսն պատասխանեց. «Դու իմ վրայ ոչ մի իշխանութիւն էլ չէիր ունենայ, եթէ քեզ ի վերուստ տրուած չլիներ. դրա համար էլ, ով ինձ քո ձեռքը մատնեց, նրա մեղքը աւելի մեծ է»: Սրանից յետոյ Պիղատոսը ուզում էր նրան ազատ արձակել: Իսկ հրեաները աղաղակում էին ու ասում. «Եթէ դրան արձակես, կայսրին բարեկամ չես: Ամենայն ոք, որ ինքն իրեն թագաւոր է կոչում, հակառակ է կայսեր»: Իսկ երբ Պիղատոսը այս խօսքերը լսեց, Յիսուսին դուրս բերեց, նստեց բեմի վրայ, այն տեղը, որ Քարայատակ էր կոչւում, իսկ եբրայերէն՝ Կապպաթա: Զատկի նախօրէն էր, եւ կէսօրուայ մօտ էր: Եւ նա հրեաներին ասաց. «Ահա ձեր թագաւորը՝ ձեզ»: Իսկ նրանք աղաղակում էին. «Վերացրո՛ւ մեր միջից, վերացրո՛ւ մեր միջից եւ խա՛չը հանիր նրան»: Պիղատոսը նրանց ասաց. «Ես ձեր թագաւորին խա՞չը հանեմ»: Քահանայապետները պատասխանեցին. «Չունենք մենք այլ թագաւոր, բացի կայսրից»: Այն ժամանակ Յիսուսին յանձնեց նրանց ձեռքը, որպէսզի խաչը հանուի:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային,
լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 12.04.2024 թ.
Տպաքանակը՝ 1265